

ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ  
ՅԵՎ  
ՔԱՂԱՃԻԱՏԱՆՔԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴՅԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՊՍԿՎԱ

1931

355:23

Դ-76

Օ  
ՀԻՃԱ

ՓՄ/  
1403

355.23  
Դ-76

1 MAR 2010

Պ. Ն. ՊՈԺԱՐՍԿԻՅ

ԱԶԳԱԲԵՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՅԵՎ  
ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԸ

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ  
1931

Ի. ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԸ ՅԵՎ Խ. Ս. Հ. ՄԻՈՒ-  
ԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կապիտալիստական աշխարհի և Խ. Ս. Հ. Միության  
մեջև որեցոք ուժեղացող անհաշտելի հակասությունն-  
ները վերջի վերջո լուծվելու յեն զինված պայքարի մի-  
ջոցով։ Կապիտալիստական աշխարհի և Խ. Ս. Հ. Միու-  
թյան միջև հակասությունների սրման պատճառ են  
ծառայում մեր բացառիկ հաջողությունները սոցիա-  
լիստական շինարարության գործում և դրա հետ կապ-  
ված՝ բուրժուազիայի հույսերի կատարյալ խորտա-  
կումը այն բանի մեջ, թե ուրութեարական դիկտա-  
տուրան հետզհետե կվերասերվի ների պայմաննե-  
րում։ Մեր հարաբերությունների վատանալու վրա  
կապիտալիստական աշխարհի հետ ազդում ե նաև  
Խ. Ս. Հ. Միության ուժեղացող դերը, վորովս հե-  
ղափոխական գործոնի, վորը զարթեցնում ե ամբողջ  
աշխարհի բանվորների և գյուղացիների դասակարգային  
գիտակցությունը և կամքը կովելու կապիտալիզմի  
դեմ՝ ինչպես իմակերիալիզմի յերկրներում, նույնպես  
մանավանդ, գաղութներում և կիսագաղութներում։

Ճշտիվ նախորոշել, թե յերբ տեղի կունենա իմ-  
պերիալիստների նոր հարձակումը Խ. Ս. Հ. Միության  
վրա, — անկարելի յե, բայց մեր յերկրի ամեն մի քա-  
ղաքացի պետք ե կատարյալ ճշտությամբ հաշիվ ո ո-  
իրեն, վոր համաշխարհային խաղաղ դադարի ժամկ՝ ու-

Թարգմ. Խ. Տ.-Ղ.

Դублет է  
госуд. бюджет. снк.  
И. В. И. Ленина



4661-84

Уполн. главлита № В-201 Заказ № 1650 Тираж 4.000  
Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10.

ները, վորոնց մասին իր ժամանակին ասել ե Լենինը,  
կրծատվում են որեցոր: Առանձնապես նկատի պետք  
ե առնել, վոր մեր դեմ կխվելու համար՝ անգլիական  
և ֆրանսիական իմպերիալիստների ղեկավարությամբ՝  
տենդային թափով պատրաստվում են ամենից առաջ  
այն յերկրները, վորոնք գտնվում են մեր արևմտյան  
սահմանի վրա: Խ. Ս. Հ. Միությանը անհապաղ պա-  
տերազմ հայտարարելուց բուրժուազիային պահում ե  
գլխավորապես պատերազմի սոցիալական յետևանք-  
ների յերկյուղը, և այն, վոր ներկա մոմենտում կա-  
պիտալիստների բանակում բացակայում ե կատարյալ  
համերաշխությունը մեր դեմ կովելու միջոցների վե-  
րաբերամբ: Անդադար կոիլ մղելով խաղաղության  
համար, գրավելով մեր կողմը բոլոր յերկրների պրո-  
լետարական հասարակական կարծիքը՝ պաշտպանելու  
համար Խ. Ս. Հ. Միությունը իմպերիալիստների  
հարձակումից, առաջարկելով կատարյալ և ընդհանուր  
զինաթափություն, վճռականապես մի կողմ վանելով  
իմպերիալիստների բոլոր և ամենտեսակ պլովակա-  
ցիաները, վոր մենք սկսենք պատերազմը, — այլ և  
ձգտելով ավելի ևս ընդարձակել տնտեսական և առե-  
տրական կապերը, — մենք միաժամանակ պետք ե ամե-  
նայն համառությամբ և մեծագույն ուժով ամրա-  
ցնենք մեր Խորհրդային Միության պաշտպանության  
գործը և մեր Կարմիր բանակի և նավատորմի հզորու-  
թյունը, խիստ ոգտագործելով խաղաղ դադարի յուրա-  
քանչյուր որը:

Ծնորհիվ ավիացիայի և քիմիայի մեծաչափ կիրառ-  
ման, ապագա պատերազմը իր բնույթով ունենալու  
յե այն բնորոշ առանձնահատկությունը, վոր նա

ջնջելու յե ճակատի և թիկունքի մեջ գոյություն  
ունեցող սահմանները. պատերազմին կմասնակցեն  
միլիոնավոր մարդիկ, վորոնք բանակ կանչված չեն  
յեղիւ նա պահանջելու յե թիկունքի, հաղորդակցության  
միջոցների, գրագետ, ուազմական արվեստը յուրաց-  
րած մարդկային պահեստների ծայրահեղ կարգավո-  
րումն, ուազմական պետքերին հարմարեցրած արդյու-  
նաբերությունն, վորը կարողանա կարճ միջոցում ար-  
տադրության ուելսերից անցնել ուազմականին, նույն-  
պես և լավ զարգացած գյուղատնտեսություն:

Խ. Ս. Հ. Միության ուազմական նախապատրաստման  
գործը իմպերիալիստների հարձակումից պաշտպանվելու  
համար կպահանջե ամենասակատիվ ոգնություն և ուշա-  
գրություն դեպի ինքը՝ վոչ միայն ուազմական վար-  
չությունից և պետական կազմակերպությունից, այլ և  
Խ. Ս. Հ. Միության ամբողջ աշխատավոր բնակչու-  
թյունից:

Սահմանագծերի յերկարության, բնակչության  
թվի և յերկրի մեծության համեմատությամբ — Կար-  
միրը բանակը կապիտալիստական յերկրների բանակ-  
ների գիմաց ամենից փոքրն ե ու եժանը աշխարհիս  
յերեսին: Խաղական մինչ զինակոչը նախապատրաստ-  
ման և աերըհտորիալ զորահավաքի մեր սիստեմը այն-  
պես ե գրված, վորպեսզի բնակչությանը ուազմական  
գործը սովորեցնելը վորքան կարելի յե քիչ միջոցները  
խի պետական բյուջետից և յերկար ժամանակով յետ  
չպահի բանվորներին և գյուղացիներին իրենց սովո-  
րական խաղաղ և ոգտակար աշխատանքից: Բայց  
բնակչության զորքերից դուրս նախապատրաստելու  
խնդիրը չի կարող զլուխ գալ կարճ ժամանակում մի-

միայն ուղղմական վարչության ուժերով և դբա համար ել իր լուծման համար այդ հարցը պահանջում է ամբողջ խորհրդային հասարակայնության լայն ողնությունը:

Մոտակա տարիներում ուղղմական ժամանակի մեծագույն լարվածությանը դիմանալու և Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելու համար մենք պետք ե տասնամյակենք մեր աշխատանքը Պետք ե բնակչության ուղղմականացմանը ծառայեցնենք վճռականապես՝ առանց բացառության՝ բոլոր հասարակական կազմակերպությունների և առաջին նվագ՝ Ոսոպիարքիմի բոլոր ողակներն և լծակները։ Ամեն կերպ ոգտագործել այդ աշխատանքի համար մեր կուլտուրական-լուսավորական կազմակերպությունների ամբողջ ցանցը ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում։ Լեցնել ուղղմական բովանդակությամբ մեր ամբողջ քաղաքական-լուսավորական մասսայական աշխատանքը։

## II. ՈԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատավորների ուղղմականացման ձևերի և մեթոդների մասին խոսելուց առաջ պետք ե կանգ առնենք ուղղմականացման բովանդակության վրա։

Առաջին պրոբլեմը, վորը պետք ե ամենից աչքի ընկնող տեղը գրավե մեր ուղղմական սլրոպագանդի մեջ, կայանում ե նրանում, վոր պետք ե բացատրել կոմունիստական ինսերնացիոնալի ՎI կոնգրեսի և Համկոմկուսի XVI համագումարի վորոշումների վորով հենց ուղղ-

մական վտանգի պրոբլեմը, վոր միջազգային ընթացիք դրության զվարար ողակն ե հանդիսանում։

Մեր բացատրողական աշխատանքի մեջ մենք պետք ե ասենք աշխատավորական լայն մասսաներին իմպերիալիստական պատերազմների անխուսափելիության մասին, վորը բղխում ե նենց իմպերիալիզմի ընույթից։ Այստեղ անհրաժեշտ ե ընդգծել այն միտքը, վոր պատերազմի վտանգի թերագնահատությունը և անբավարար պայքարը նրա դեմ հիմնական վտանգն եր հանդիսանում պրոլետարիատի և նոր կոմունիստական ավանդաբարի համար։

Անհրաժեշտ ե առանձին ուշադրություն դարձնել ներկա դեպքում այն խաղաղասիրական (պացիֆիկ) խարեյության մերկացման վրա, վորի անվան տակ բուրժուազիան տեսնդային թափով նախապատրաստում ե նոր զինված ընդհարումներ։ Մանավանդ անհրաժեշտ ե մերկացնել մանրամասնորեն բուրժուական խաղաղության այնպիսի զենքերի և մանյովրների կեղծիքը, ինչպես կելլոգի նշանավոր պակտն ե «Պատերազմի, վորպես ազգային քաղաքականության գործիքի արգելման մասին» և Ազգությունների Լիգան։

Հիշյալ պրոբլեմը բացատրելիս առանձին ուշադրություն պետք ե դարձնել սոցիալ-դեմոկրատիայի հականեղափոխական գործներյության վրա, այն սոցիալ-դեմոկրատիայի, վորը վերջնականապես անցել ե բուրժուական բանակը և իրավամբ արժանացել ե սոցիալ-իմպերիալիստ անվանը։

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ ե կանոնավոր կերպով պարզաբանել հեղափոխական պաշտպանության հարցերը մեր խորհրդային պայմաններում,

վորպես հակաղը ություն պարտվողականության լոգուն-  
գին, վորը պահպանել ե իր ամբողջ իմաստը կապի-  
տալիստական տիրապետության պայմաններում։

Անհրաժեշտ ե մտցնել այդ ցիկլի մեջ նաև յեղ-  
բայրացման հին լոգունգի հարցի պարզաբանությունը,  
վորը այժմ, կարմիր բանակի ընդհարման դեպքում  
մեր հավանական թշնամիների հետ, դարձել ե սխալ  
և պետք ե փոխարինվի ոտար բանակների գինվորնե-  
րին մեր բանակը դրավելու լոգունգներով։ Ինքն ըստ  
ինքնյան հասկանալի յե, վոր ունենալով ինտերնացիո-  
նալ բնույթ, կարմիր բանակը չի կարող հանդուրժել  
իր մեջ ազգայնական շովեն հոսանքներ կամ տրամա-  
դրություններ, վորոնք Խ. Ս. Հ. Միության գինված  
ուժերի առաջ դնում են միմիայն մեր սահմանների,  
մեր անկախության և բարելավության պաշտպանման  
նեղ ու սահմանափակ խնդիրները, մոռացության տա-  
լով մեր ինտերնացիոնալ պարտականությունները։

Հետեւալ պլոբլեմը, վորը պահանջում ե վոչ պակաս  
մանրազննին պարզաբանություն աշխատավորական  
լայն մասսաների մեջ, դա մեր Խոր հրդային  
Միության պայքարի պրոբլեմն ե խաղա-  
ղության համար։ Այդ հարցի նկատմամբ գոյու-  
թյուն ունին յերկու սխալ տեսակետներ. վոմանք  
տրամադիր են գերազնահատելու մեր կառավարու-  
թյան հնարավորությունները այդ ուղղությամբ, իսկ  
վոմանք — թերագնահատելու։ Առաջին դեպքում յեր-  
կյուղ ե ծագում, վոր կառաջանա խվոստիստական  
վերաբերմունք դեպի պատերազմի սպառնալիքը, ինչ-  
պես նաև մերձեցում՝ ազգայնական սահմանափակու-  
թյան թեքման հետ։ Յերկրորդ դեպքում ծագում ե

յուրատնսակ հեղափոխական ավանտյութիզմի (արկա-  
ծախնդրության) վտանգը։

Այդ պրոբլեմի պարզաբանության կանոնավոր ուղ-  
ղությունը պետք է արտահայտվի ինչպես խաղաղու-  
թյան համար, տարվող պայքարի խաղաղ միջոցների  
հաշվարկությամբ, նույնպես և հաշվի առնելով այն  
պայմաններն ու հեռանկարները, վորոնց միջոցով  
անհնարին կլինի անվերջ և միմիայն դիվանագիտական  
ճանապարհով հեռացնել Խ. Ս. Հ. Միության ընհար-  
ման վայրկյանը իմպերիալիստների հետ։ Համենայն  
գեպս մոտակա ժամանակաշրջանի համար մեր պար-  
տականությունն ե անհրաժեշտորեն ձեռք առնել  
ամեն միջոց, վորպեսզի զինված ընդհարման մո-  
մենտը ամենամեծ չափով հեռացվի այն սահման-  
ներում, վոր չտուժեն Հոկտեմբերի հիմնական նվա-  
ճութները, վորպեսզի այսպիսով դադարի յուրաքան-  
չյուր որը կարելի լինի լավագույն կերպով ոգտա-  
գործել մեր սոցիալիստական տնտեսությունը և ԽՍՀ  
Միության պաշտպանվելու ունակությունը ամրա-  
ցնելու համար։

Ինքնըստնքյան հասկանալի յե, վոր խաղաղության  
համար տարվող պայքարի պրոբլեմի վրա մենք  
պիտի նայենք իր հերթին վորպես հեղափոխական պրո-  
պագանդի միջոցներից մեկի վրա, վորը նպաստում է  
պրոլետարիատի գասակարգային ինքնագիտակայցության  
ամրացմանը, զրավում ե նրա համակրանքը մեր  
կողմը, մերկացնում է բուրժուական խաղաղասիրու-  
թյան մեթոդները, բուրժուական դիվանագիտության  
գասակարգային բնույթը և բուրժուական ամբողջ  
իրավակարգը։

Բազմական պրոպագանդի կարևորագույն պրոբեմներից մեկն ե հանդիսանում յերկրի ինդուստրացման պրոբեմը, Խ. Ա. Հ. Միությունը կապիտալիստական յերկրներից տեխնիկավես կախումն ունենալուց ազատելու պրոբելեմը: Ժամանակակից պատերազմը պահանջելու յերկրի տնտեսական որդանիղմի և, ամենից առաջ՝ արդյունաբերության մի արտասովոր լարումն: Պատերազմի պատճառով վոչ միայն խաղաղ արտադրությունը անցնելու յեռազմական ոելսերին, այլև լիովին դադարելու յերեղից ներմուծումը արտասահմանից: Ամենից առաջ դա վերաբերվելու յերեքնաների, մի շարք մետաղների, քիմիական նյութերի, ավտոմոբիլային և ողային տրանսպորտին հարկավոր մոտորների, դեղերի և այլն ներմուծությանը: Բոլորին հայանի յերեղի վերաբիսի պատասխանատու և համարյա վճռող նշանակություն ե ստանում պատերազմի ժամանակ ավիացիոն և քիմիական արդյունաբերությունը: Այդ մասին շատ պերճախոս կերպով վկայում են անցյալ համաշխարհային պատերազմի փորձը և ժամանակակից բանակները, վորոնց մեջ, ինչպես նաև ժամանակակից պատերազմի տակտիկայի մեջ, ահազին ուշադրություն ե դարձվում ավիացիայի և քիմիայի վրա: Դրա համար ել ամեն մի զինվորին անհատապես ռազմական արվեստը սովորեցնելու, ապագա պատերազմների բնույթին, ժամանակակից կովի տակտիկային ծանրթացնելու, հրաձգություն և այլն սովորեցնելու հետմիաժամանակ մենք պետք են ներգրավենք Խորհրդային Միության ամեն մի քաղաքացուն:

արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը՝ բարելավելու և ընդարձակելու գործի մեջ: Բնակչության լայն մասաների կողմից մեր արտադրության բարելավմանը սունելու կարևորագույն ձևերից մեկն ե հանդիսանում արտադրական խորհրդակցությունների և ձեռնարկությունների մեջ գըտնվող վերաստուգիչ հանձնաժողովների աշխատունակության բարձրացումը, ըստ վորում պետք ե աշխատել ներգրավել այդ աշխատանքներին բանվորական ակտիվը ամենամեծ չափով: Առանց միլիոնավոր աշխատորների կողեկտիվ ջանքերով այդ կարևոր խնդիրները իրագործելու, չի կարելի մեր յերկրի պաշտպանության ամրացման հարցը վճռել պատշաճ ուղղությամբ:

Նետեյալ վոչ պակաս կարեոր պրոբելմը, վորը մենք նրա մասնագիտական բնույթի պատճառով՝ առանձնացնում ենք, — դա մեր խաղաղ արդյունաբերության մոբիլիզացիան ե ուղմական ժամանական ժամանակի դեպքերի համար:

Մեզանում, ցարական ժամանակ, զգալի չափով մեծ տեղ եր բոնում ուղմական հատուկ արդյունաբերությունը, մինչդեռ այլ՝ զարգացած արդյունաբերություն ունեցող յերկրներում դրա տեսակարար կցիուր չնշին ե, բայց այնտեղ կա ահազին խաղաղ արդյունաբերություն, վորը ընդունակ ե կարճ միջոցում իր արտադրական գործառնությունները վերածել ուղմականի: Մենք հենց վորպես ժառանգություն, ստացել ենք մի շարք հատուկ ուղմական գործարաններ, վորոնք չեն կարող գործել խաղաղ ժամանակի պահանջների համար: Մենք ունենք խա-

զաղ արդյունաբերություն, վորը անպետք ե ռազմական ժամանակի համար։ Մեր արդյունաբերության աշխատանքում հատու զիծ ե քաշված ռազմական և խաղաղ շրջանների միջև։

Դրա համար ել անհրաժեշտ ե ամեն կերպ հաշվի առնել մեր արդյունաբերության մեջ Արևմտյան Յեղողայի և Ամերիկայի փորձը։

Վերջապես ռազմական պրոպագանդի ընդհանուր կոմպլեքսի մեջ ամենակարենոր խնդիրներից մեկն ե կարողանալ սահմանել կանոնավոր հարաբերականություն հեղափոխական վորդեռության դերի և ռազմական տեխնիկայի միջև ապագա պատերազմի պայմաններում։ Այդ հարցի առթիվ մինչև այժմ գոյություն ունեն բազմաթիվ վիճելի և չպարզված տեսակետներ և նախապաշտմունքներ աշխատավորների լայն մասսաների մեջ։ Վոմանը, և դրանց թվում քաղաքացիական կոփեներին մասնակցողներից մի քանիսը, տրամադրի են յենթադրելու, վոր մեր Կարմիր բանակի և մեր հավանական թշնամիների ընդհարման դեպքում զնուական գործոն են յանդիսանալու այն հեղափոխական վոգերությունը և դասակարգային հեղափոխական դիտակցությունը, վոր ունեն և ունենալու յեն մեր կարմիր բանակացիները։ Այդ ընկերները տրամադրի են կարծելու, վոր կոմի տեխնիկական միջոցների գերը ապագայում հավասարվելու յետի վոչ զերոյի, գոնե մինիմալ նշանակություն և ունենալու։

Մեր ընկերների մի այլ մասը, ընդհակառակն, հակում ունի գերազնահատելու տեխնիկայի դերը պատերազմում և թերագնահատելու Կարմիր բանակի

մարտիկների դասակարգային զիտակցության և հեղափոխական վոգերության դերը ապագա պատերազմում։ Մենք պետք ե վճռականապես դատապարտենք այդ յերկու ծայրահեղությունը։ Ապագա պատերազմում բանակի զիտակցականության և հեղափոխական խանդակառության մեջ, մի կողմից, տեխնիկական ոդնության մեջ, մյուս կողմից, պիտի լինի համապատասխան հարաբերականություն։ Ավելի ճիշտը՝ այդ յերկու տարրերը պիտի միացած լինեն ներդաշնակորեն։

Մեր իդեալը կայանում ե նրանում, վոր կարմիր բանակացիների պատշաճ քաղաքական դաստիարակության հետ միաժամանակ մեր զորքը հնարավոր յեղածի չափ կարճ միջոցում հասնի ռազմական տեխնիկայի այն մակարդակին, վորը ունեն Արևմտյան Յեղողայի առաջավոր բանակները։

Միմիայն «վոգու» և «տեխնիկայի» այս տեսակ միացումը կարող ե ապահովել մեր կարմիր զենքի անպայման հաղթությունը բուրժուազիայի դեմ։

Վերջապես, առանձնակի կանդնած ե մեր առաջ ռազմական հատուկ գիտելիքների մասսայական պրոպագանդի խնդիրը քաղաքացիական դատակցությունը և նրա ռազմական բնակչության մեջ և նրա ռազմական դաստիարակության խնդիրը։

Ռազմական գործը սովորեցնում ե մարդուն խըստիվ կարգապահություն, արագությամբ և ճշտիվ կատարել հանձնված գործը, զարգացնում ե նախաձեռնության զգացմունքը, ակտիվությունը, ամեն տեսակ պայմաններին հարմարվելու ունակությունը և ամեն տեսակ, թեկուզ չափազանց դժվարին, դրությու-

նկայ յելնելու ընդունակությունը, չենց այդ հատկություններն ել հարկավոր են մեզ վոչ միայն պատերազմի պայմաններում, այլ և մեր խաղաղ գործներության պայմաններում, վորովհետև ամենքն ել, վերջիվերջո, զիտեն, վոր առանց կազմակերպության, առանց կարգապահության և անորինակ լարվածության աշխատանքի մեջ և ամենորյա մեր գործերում, մենք չենք կարող լուծել այն հսկայական խնդիրները, վոր պատմությունը դրել ե մեր ուսերին:

### III. ՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ռազմական ամբողջ աշխատանքը կարելի յե բաժանել յերկու հիմնական ձևերի, մասսայական և էմբակային:

Լայն ծավալված և վորոշ սիստեմով զրված մասսայական աշխատանքը հանդիսանում ե ընակչության ռազմականացման գործի զարգացման և մնական պայմաններից մեկը: Միմիայն մասսայական աշխատանքի հիմքով հսկաբալոր ե բավարար չափով դնել և ծավալել աշխատանքի գանգանակերպ խորացրած ձերը, վորոնց թվում նաև խմբական աշխատանքները:

Մասսայական աշխատանքի ընդունված ձևերին պիտի դասել հսկաբակական լայն կամպանիաներ վարելը — սունակատարություններ, զբոսանքներ, եկակուրսիաներ, կազմակերպել զանազան մրցություններ, կոնկուրսներ, սարքել առանձին ռազմական յերեկութներ գեկուցումներով, ներկայացումներով, համերգներով, կինո-պատկերներով, հանդեսներով, հարցու պատասխաններով, ոգտագործել վորոշ ծրագրով ուղղիոն, կազմակերպել դասախություններ և մի-

տինակներ, կազմակերպել ուսումական արշավներ, զորոխաղեր, ամառային ճամբարներ, ցուցահանդեսներ, ողտագործել մասսայական մամուլը, մանականդ պատիլ լրագիրները, կազմակերպել հատուկ կոնֆերանսներ, զանազան համագումարներ և խորհրդակցություններ խորհրդային, հասարակական պլոտֆորմութենական, կոմյերիտական և կուսակցական կազմակերպությունների գծով: Վերը հիշած մասսայական աշխատանքների բոլոր ձևերի կիրառումը պետք ե տարվի խստիվ համաձայնեցնելով դրանց սպասարկվող բնակչության հետ և հաշվի առնելով նրա կենսակրթական առանձնահատկությունները: Որինակ, ինժեներա-տեխնիկական ուժերին և ինտելիգենցիային սպասարկելու հարկավոր ե առաջ քաշել աշխատանքի այնպիսի բովանդակությունն և ձևեր, վորոնք ավելի ընդունելի, հարկավոր և հետաքրքրական են տվյալ շրջանի համար: Սահմանամերձ վայրերում և աղջային փոքրամասնությունների մեջ աշխատանքը պետք ե վարել, հաշվի առնելով թշնամումոտիկ գտնվելու առանձնահատկությունները և սահմանամերձ բնակչության տրամադրությունները: Յերկրի պաշտպանության համար աշխատող գործարանում աշխատանքը պետք ե տանել մի փոքր այլ կերպ, քան այն ձեռնարկություններում, վորոնք կարող են ուղամական գործներության անցնել զորահավաքի մոմենտին: Մեզոնային բանվորներին պետք ե մոտենալ, հաշվի առնելով նրանց կապը զյուղանասության հետ, Յերիտասարդությունը և կանայք, իրենց հերթին, առանձին մերձեցումն են պահանջում: Նույնպես հարկավոր ե հաշվի առնել աշխատանքի յուրատեսակությունը արձակուրդում գտնվողների, հրամ-

կտղմի, պահեստի մարտիկների, դպրոցականների և  
այլն մեջ.

Այլ խոսքով, ուազմական աշխատանքի կազմակերպիչը  
պետք է լինի չափազանց ճկուն մանկավարժ և այդ  
գործում վոչ մի դեպքում չպետք է շաբան ուղի-  
յով ընթանա:

Ամենապապույար հասարակա-  
կայֆանիւներ: Կան կամպանիան, վորը ամեն տարի  
ոգտագործվում է բնակչության մաս-  
սայական ուազմականացման համար, ինքնապաշտ-  
պանության տասնորյակներ: Ուազմական պրո-  
պագանդի համար սովորաբար ոգտագործում են նաև  
Կարմիր բանակի, Հոկտեմբերյան հեղափոխության  
տարեղարձները, յերիտասարդության միջազգային որը,  
մայիսի 1-ը, բերքի որը, մարտի 8-ը — միջազգային  
կանանց որը:

Բացի այդ, յուրաքանչյուր ույոնում — առանձին  
ձեռնարկություններում կարող են սարքվել իրենց սե-  
փական կամսանիաները: Ուազմականուսուցման ցանցի  
լրացումը, լավագույն հրացանաձիգ, կապի ծառայող,  
գնդացիրներով կրակողներ ունենալու կամպանիա-  
ներ, ուսուցման հանրագումարը հայտաբերելու կամ-  
պանիա և այլն:

ԵԿՍԿՈՒՐԾԻԱՆԵՐ Եկսկուրսիաների աշխատանքը  
կազմած պետք է լինի եկսկուրսիոն  
վորոշ համապատասխան կազմակեր-  
պությունների հետ: Եկսկուրսիաների նյութ կա-  
րող են լինել յերկրի պաշտպանության հետ կապ  
ունեցող գործարանները, դորամասերը — դրանց թվում  
ընդշեֆյա մասերը, — ուազմադպրոցական հաստատու-

թյունների դասարանական զբաղմունքները, նրանց  
լաբարատորիաները և կարինետները, ուազմական նա-  
վերը, ոդաքիմիական թանգարանները, կարմիր բա-  
նակի և նավատորմի տները և այլն: Յանկալի յեռգ-  
տագործել եկսկուրսիաները, ինչպես մասսայական աշ-  
խատանքի պլանով, վորպես առանձին եկսկուրսիաներ,  
նույնպես և խմբական ուսուցման պլանով — խմբերի  
հետ ուազմական զիտելիքներ անցնելուց առաջ, քի-  
միական, հրացանաձիգ, ոդաչվական խմբերի հետ պա-  
րապելուց առաջ, այլ և պարապմունքների ժամանակ,  
նայած ծրագրին և նյութին և այլն:

Տոնակատարությունները մասսա-  
ՏՈՆ ԱԿԱՏՈՆ ՐՈՒ-  
ԹՑՈՒՆՆԵՐ յական աշխատանքի ամենազբավիչ  
ձևերից մեկն են կազմում, վորով-  
հետև նրանք միացնում են զիտելիքների, խելացի  
հանգստի և բավականությունների մի ամբողջ շարան:  
Ամենից հարմար և տոնակատարությունները կազմա-  
կերպել ամառը, ոգտագործելով զրա համար այգի-  
ները, ամառային հրապարակները, քաղաքից դուրս  
կատարվող զբոսանքները, միացնելով այդ զբոսանք-  
ները տոնակատարությանը բոլոր մասնակցողների  
նախնական ուազմական զբոսանքի կամ եկսկուրսիայի  
հետ: Տոնակատարության ժամանակ հարկավոր է  
կազմակերպել զանազան խմբերի յելույթներ (թատ-  
րոնական, յերաժտական, յերգեցիկ) կենդանի լրագր-  
ներ, սպորտային մրցություններ՝ դիմացկունություն,  
տարածություններ անցնելու, թիվավարության և լող  
տալու (յեթե ջուր կա), հրացանաձգություն, ուազ-  
մական զրականության ցուցահանդեր՝ Կայուն Տարածություն  
կատարություններ կարելի պարզաբանելով և այլապես

գուտ ռազմական բնույթով, նույնպես և սովորական հասարակական բնույթի կրող, մտցնելով վերջնաբերիս մեջ համապատասխան ռազմական տարր:

Մասսայական զբոսանքները ինչ-  
ՊԱՍՏԱՅԱԿԱՆ պես իրենց կազմով, նույնպես և բո-  
ԶԲՈՍԱՆՔՆԵՐ վանդակությամբ, կարող են լինել  
զանազան տեսակի: Ցանկալի յե կազմակերպել այդ  
զբոսանքները ընդշեփյա կամ մոտիկ գտնվող կարմիր  
բանակայինների հետ միասին: Զբոսանքի ժամանակ  
իր հերթին հարկավոր ե կազմակերպել սպորտ-մրցու-  
թյուն, գեղարվեստական յելույթներ, խաղեր և այլն:  
Բանվորների և կարմիր բանակայինների միասին գրտ-  
նվելը զբոսանքների ժամանակ, կարմիր բանակային-  
ների կենցաղին ծանոթանալը կնալաւաեն քաղաքա-  
կան մասսայի ռազմական դաստիարակությանը և  
կդառնան նրանց համար ռազմական պրոպագանդի  
ձևերից մեկը: Մասսայական զբոսանքները բնական  
հարստություններ, պատմական կամ այլ առանձնա-  
հատկություններ ունեցող վայրերում կարող են միա-  
ժամանակ ոգուտ բերել զբոսանքներին մասնակցողնե-  
րին՝ լայնացնելով նրանց աշխարհայացքը: Ամեն մի  
զբոսանք պետք է կատարվի վորոշ լոգունգների տակ,  
վորոնց շուրջը ծալվալվում են հիմնական ձեռնար-  
կումները և յելույթները: Այդ տեսակ լոգունգների  
դոյությունը կնալաւա զբոսանքի ամբողջությանն ու  
զբոսանքին մասնակցողների զողմանը վորոշ դադա-  
փարի շուրջը: Բացի այդ, մասսայական զբոսանքները  
կարելի յե հարմարեցնել կարմիր որացույցի կամ  
վորենե կամպանիայի վորոշ որերին: Այդ դեպքում զբո-  
սանքի առանցքը պետք է սպառի այդ որերի կամ

կամպանիաների լոգունգների շուրջը: Ռազմականաց-  
րած զբոսանքներին պետք է տալ վորոշ ռազմական  
կարգ և ծանոթացնել նրան մասնակցողներին զորա-  
մասերի: ռազմական զարժման դրծնական քայլերին:  
Դա նշանակում է, վոր զբոսանքին մասնակցողները  
կազմակերպվում և գառնում են վորոշ ռազմական  
միություն, պահպանում են ռազմական յերթի կարգը,  
կազմակերպվում են հետախույզ և կազի ծառայու-  
թյուն, ծանոթանում են դադարի ժամանակ կատար-  
վող դիմակավորման, պահակային պաշտպանության  
և հսկելու մեթոդներին և այլն: Ռազմական զբոսանքի  
սկզբում, յերբ բոլորը հավաքված են նշանակված  
տեղը, զբոսանքի կազմակերպիչները անպատճառ  
պետք է ստուգեն, թե պատրամատ ե, արդյոք, ամեն  
ինչ յելույթի համար, ծանոթ են բավարար չափով  
զբոսանքի ծրագրին բոլորը և այլն: Այնուհետև խմբի  
վարիչի մի փոքրիկ ներածությունից հետո, յելնում  
են իրենց տեղից: Հաջողության տեսակետից շատ մեծ  
նշանակություն ունի ինչպես մարզուտի, նույնպես  
և զբոսանքի վերջնական վայրի ընտրությունը, վոր-  
տեղ պիտի կենտրոնանան մասսայական յելույթն ու  
զվարճությունները: Այդ վերջնական վայրը պետք է  
ընտրված լինի առաջուց և հարմարություններ ունենա:  
Ցանկալի յե, վոր այդ վայրը լինի մոտիկ և չոր:  
Յերթի ճանապարհը միշտ ել չպետք է ամենակարճը  
լինի, այլ պետք է լինի ամենից հետաքրքրականը,  
այն հաշվով, վոր այդ յերթը կատարվի բազմատեսակ  
տեղերով (անտառ, դաշտ, ձոր, բարձրություններ,  
գետի կամ լճի ափ և այլն): Զորադարձարների տեղն  
ել, իր հերթին, առաջուց պետք է նշանակված լինի:

Վորոշ դեպքում դադարը կազմակերպվում է հանգստանալու համար, իսկ այլ դեպքերում — վօրպեսզի ծանոթանան վայրին ռազմական նպատակներով, այլ և ծանոթանան բնության յերեսույթներին: Դրա համար հարկավոր ե ընտրել բավականաչափ հետաքրքրական վայր ինչպես ռազմական, նույնպես և բնագիտական տեսակետներից (բնության հարստության կամ տեսարանների գեղեցկության տեսակետից): Գետերով անցնելու ժամանակ ցանկալի յե ծանոթացնել զբոսանքին մասնակցողներին գետանցքի տեղը գտնելու, կամուրջներ շինելու, դրանցից ոգտվելու կամ քանդելու պայմաններին: Վերջնական վայրը հասնելուց հետո սկսում են շինել և սարքել ճամբարը: Զանազան խմբերի կայարանների տեղերը առաջուց ընտրում են նախորոշ գնացած բնակարանապետները, վորոնք դիմավորում են իրենց խմբերին և տանում նրանց համար ընտրված տեղը: Այնուհետև ամեն մի խումբ սկսում է կառուցել իր ճամբարը: Սպորտսմենները կառուցում են այն ամենը, ինչ վորանիքեցաւ ե սպորտյելույթների և մրցությունների համար, այդ նպատակով ընտրում են անհրաժեշտ հրապարակ ֆուտբոլի, բասկետբոլի, լառն-թենիսի, շարժական տիրի և այլն համար: Գեղարվեստական խմբակները շինում են տեղ թատրոնական կամ յերաժշտական յելույթների համար: Տնտեսական խումբը շինում ե վրաններ հանգստության համար, մոծակներից, անձրեից և խոնավությունից պաշտպանվելու համար և այլն: Սպա սահմանիում և կարգավորվում ե համապատասխան կազը բանակի առանձին մասերի միջև: Հանգստանալուց և կերակրվելուց հետո զբո-

սանքի կազմակերպիչները մշակում են խաղերի, մրցությունների և զվարճությունների ծրագիրը: Մրցությունների ցուցակի մեջ կարելի յե մտցնել: վազքխոչնոտներով, տեղադրության վորոշումը կողմացույցով, աչքաչափով վորոշել տարածությունը, հրացանաձգություն, լող, ֆուտբոլ, բասկետբոլ, նիզակախաղ, ոճբաճգություն, վոստյուններ ձողի ոգնությամբ և մի շարք այլ խաղեր, վորոնք նպաստում են ինչպես ֆեղիկական մարզանքներին, նույնպես և զարգացնում են ռազմական բնույթ կրող վարժությունները: Առանձին ուշադրություն պետք ե դարձնել բացողյա կատարվող խաղի վրա (աչքախափուկ, լախտ), Բնագիտական խումբը կարող է հենց այսեղ մարզկանց ծանոթացնել մի շարք բնագիտական եկամունատներին, ծառերի վորոշ տեսակներին, ծառերի տեսակների մեջ գոյություն ունեցող հայտնի հարակցության որենքին, կանգ առնելով նաև անտառի տնտեսական և ռազմական նշանակության վրա: Լճակի ափին դտնվելու գեպքում, բնագիտական խումբը ծանոթանում է լճակի կյանքին, որգանիզմի բնական միջավայրին հարմարվելու որենքներին, ջրամբարի բուսական և կենդանական աշխարհներին, կազմում ե բույսերի և միջատների հավաքածու և այլն: Տեղագրական (տոպոգրաֆ) խումբը, վոր սովորում ե գծագրություն, իր հերթին կատարում է վայրի տեղագրական գծադիրը, նկարում է ճամուկներ, դնելով նրանց վրա պայմանական նշաններ, վճռում ե մի շարք խնդիրներ՝ ռազմական գորամասերը, հրետանին, գնդացիրները և այլն այդ վայրում տեղակերպություն:

Զուտ ուադմական պարապմունքների ծրագրի մեջ  
անհրաժեշտ ե մտցնել նդհանուր տագնապի կազմա-  
կերպությունը, վորը սիրտի տեղի ունենա թշնամու-  
սակառնակների պայմանական հարձակման հետևան-  
քով, ըստ վորում ծրագրի այդ մասը ավելի հաջողու-  
թյամբ կատարելու համար անհրաժեշտ ե նախապես  
մանրամասնորեն ծանոթացնել զրոյանքի բոլոր մաս-  
նակիցներին տագնապի պայմանական ազդանշաննե-  
րին և այն միջոցառումներին, վոր ամեն մեկը պարտավոր  
ե կիրառել՝ ազդանշանը լսելուն պես: Զբոսանքը  
վերջանալուց և ամբողջ ծրագիրը կատարելուց հետո  
սահմանված կարգով բոլորը վերադառնում են տուն:

Անհրաժեշտ ե նկատի առնել, վոր մասսայա-  
կան զբոսանքի հաջողությունը դաշտում  
վերը հիշած բոլոր բազմատեսակ նպատակ-  
ներով՝ ամենից առաջ կախված ե պատշաճ  
նախադատը աստությունից: Զբոսանքին մաս-  
նակցողների ամբողջ մասսան նախորոք պետք ե բա-  
ժանված լինի խմբերի: Զբոսանքի գլուխ պետք ե  
կանգնի կազմակերպիչների շտաբը, վորը կազմված  
ե զբոսանքի առանձին մասերի կազմակերպիչներից  
(ներկայացումների կազմակերպիչ, սպորտի կազմա-  
կերպիչ, արշավի կազմակերպիչ, անտեսական մասի  
կազմակերպիչ և այլն): Ցելույթից առաջ յուրաքանչ-  
յուր կազմակերպիչ կազմում ե մոտավոր ծրագիր,  
կանխատեսելով բոլոր պահանջները: Այդ պլանը կազ-  
մելու կարգը հետեւալի ե.

1) Վորոշվում են նպատակն ու խնդիրները և  
նշանակվում են հիմնական լոգունդներն ու մոտավոր  
ծրագիրը:

2) Նշանակվում են խմբեր՝ նշանակված ծրագիրը  
նախապատրաստելու և գլուխ բերելու համար:

3) Վորոշվում են մասնակցողների և ղեկավար-  
ների կազմերը:

4) Վորոշվում են զբոսանքի վայրը և հերթի  
կարգը, նկարագրվում ե մարդուակի տեղը, յերթի  
կարգը, դադարը և հանգստի տեղը, այլ և արվում են  
նկատառումներ ճամբար կառուցելու համար:

5) Կազմվում ե նյութական և դրամական նա-  
խահաշիվ:

6) Հաշվի յե առնվում առաջադրված խնդիրները  
իրագործելու համար անհրաժեշտ ժամանակը:

7) Վորոշվում ե հրահանգման և ստուգման կարգը,  
վորը կատարվում ե կազմակերպիչների, հանձնաժո-  
ղովների, գործի անցած բոլոր աշխատողների ժողով-  
ներում: Նշանակվում են ղեկավարների զեկուցում-  
ները, կազմվում են գրավոր հրահանգներ, կատար-  
վում ե նախապատրաստության և իրադորժման անձ-  
նական ստուգումն:

Ամեն մի կազմակերպչին ողնելու համար տրվում  
են համապատասխան հանձնաժողովներ առանձին ձեռ-  
նարկների համար:

1) Արշավը կազմակերպելու հանձնաժողով (վորի  
մեջ մտնում են վայրի հետախուզության ղեկավարը,  
կապի ծառայության ղեկավարը և այլն):

2) Սպորտի և խելացի զվարճությունների հանձ-  
նաժողով (վորի մեջ մտնում են մասսայական խա-  
ղերի ղեկավարը, ֆուտբոլի, բասկետբոլի, վագերի  
մրցության ղեկավարները և այլն):

3) Տեսարաններ կազմակերպող հանձնաժողով  
(վորի մեջ մտնում են կենդանի լրագրի դեկավարը,  
մասսայական շարժման դեկավարը, յերգեցիկ խմբի  
դեկավարը, նվագախմբի դեկավարը և այլն):

4) Տնտեսական հանձնաժողով (վորի մեջ մտնում  
են սննդառության դեկավարը, յելույթների տեղերը  
պատրաստողների դեկավարը, ճամբարներ կառուցող-  
ների դեկավարը և այլն):

Ցանկալի յե, վոր ամբողջ պլանը կարդացվի և  
հաստատվի բոլոր կազմակերպիչների և դեկավարների  
ընդհանուր ժողովում՝ ակմբային և գործարանային  
կազմակերությունների ներկայացուցիչների հետ միա-  
սին (Համկոմկուսի (բ) կողեկտիվ, գործկոմ, Ոսու-  
վիաքիմի բջիջի բյուրո): Ամբողջ եկակուրսիան դեկա-  
վարում են եկակուրսիայի պետը և նրա ողնականը,  
վորը միենույն ժամանակ շտարի պետն ե, և վորին  
կից կազմակերպվում ե համապատասխան շտաբ հիմ-  
նական կազմակերպիչներից և ուղարկան մասերի,  
դասակների, վաշտերի կամ գումարտակների պետե-  
րից՝ նայած զբոսանքին մասնակցողների թվին:

Զբոսանքը վերջանալուց հետո անհրաժեշտ ե  
հաշվի առնել և ուսումնասիրել նրա փորձը, այլ և  
վերլուծել պատշաճ կարգով զբոսանքի առանձին և  
մանավանդ ուղարկան ձեռնարկումները:

Նման մասսայական զբոսանքների հաջողությունը  
պետք ե ոգտագործել՝ կամավորներ գրավելու համար  
ուղարկան գիտելիքների համապատասխան խմբերը  
(հրձիգների, կապի, ողաքիմիական պաշտպանության  
և այլն):

Բացի լայն մասսայական զբո-  
տեզի ԴԱՇ ՊԵՆԵՐ սանքներից, վորոնց մեջ մտցնում  
են ուղարկանացման վորոշ տարրեր,  
հանձնարարվում ե նաև կազմակերպել հատուկ ուղ-  
մական զբոսանքներ կամ յելույթներ դեպի դաշտը՝  
աշխատավորներին ուղարկանապես նախապատրաս-  
տելու նպատակով: Դաշտ յելնելը և ուղարկան զբո-  
սանքները կարելի յե կատարել թե ամառ, և  
թե ձմեռը, ըստ վորում նախապատվություն պետք  
ե տալ փոքրիկ խմբերին և միավորություններին:  
Այդ զբոսանքները և դաշտային յելույթները պետք ե  
կազմակերպեն Ոսուավիաքիմի տեղական բջիջները,  
մասնակցության գրավելով այդ զբոսանքներին և  
յելույթներին վոչ միայն Ոսուավիաքիմի անդամներին,  
այլ և տվյալ ձեռնարկության մնացած բանվորներին  
և ծառայողներին ել:

Բացի զբանից, դաշտյելույթներ կազմակերպում  
են ուղարկան գիտելիքների խմբեր՝ վորպես ուսում-  
նական-գործնական վերամշակումն այս կամ այն  
ուղարկան թեմայի բաց ողի մեջ՝ պարապմունքների  
ծրագրը անցնելու ընթացքում: Թե մեկ և թե մյուս  
դեպքում յելույթները կարող են կատարել, ինչպես  
ուղարկան գիտելիքների խմբի ջանքերով, կամ Ոսու-  
ավիաքիմի բջիջի, նույնպես և միացյալ ուժերով ուղ-  
մական գիտելիքների մի քանի խմբերի կամ բջիջների,  
ինչպես տվյալ ձեռնարկության, նույնպես և ույոնի  
մի քանի ձեռնարկությունների մեջ:

Դաշտյելույթներ և ուղարկան զբոսանքներ կազ-  
մակերպելու բոլոր դեպքերում նպատակահարմար ե  
կիրառել զորային կազմակերպությունը ըստ համա-

աղատասխան առաջադրությունների և մասնակցողների նախապատրաստության.

Յելույթները իրենց բովանդակությամբ բաժանվում են յերկու տեսակի:

1) Այն յելույթները, վորոնց իրագործելու ժամանակ նպատակ է դրվում սովորեցնել մասնակցողներին զինվորի սկզբնական առանձին գործողությունները և այդ գործողությունների վերամշակությունը փոքրիկ զորամասերում, որինակ՝ բաժնյակում կամ դասակում:

2) Այն յելույթները, յերբ այդ խնդիրները հաջողվում են լուծել ավելի խոշոր չափով:

Առաջին խնդիրները դրվում են ինչպես ուսումնական գիտելիքների խմբերի սկզբնական յելույթների, նույնպես և մասսայական յելույթների համար:

Յերկրորդ խնդիրները կարող են դրվել միայն ամառվա յերրորդ կիսում և կարող են վերաբերվել ինչպես ուսումնական գիտելիքների խմբերին, նույնպես և այն մասսային, վորի մեջ բացի խմբերում ուսմունքը ավարտածներից, կան Ավիոքիմի զորամասեր, կարմիր բանակայիններ և պահեստի կրտսեր հրամակադրությունների:

Ոսուավիաքիմի կենտրոնական խորհուրդը դաշտյելույթների և ուսումնական զբոսանքների համար տակտիկական խնդիրները պայմանավորում են մոտավորապես հետեւյալ թեմաներով.

1. Միայնակ մարտիկի սկզբնական գործողությունները.

ա) Շարժում, կարգ, վազք, տեղից-տեղ սողալով անցնել:

բ) Դիմակավորումն և վայրին հարմարվելը:

գ) Իր համար խրամատ (թագատի տեղ) շնորհը և կրակի դեմ բնական արգելքների կիրառումը:

դ) Տարածությունների աշխաչափը:

յե) Նշանակների գտնելու ու վորոշելը և կովին հետեւելը:

զ) Աշխատանքը դաշտում քարտեզով կամ հատակագծով:

ե) Հրամանների կամ հաղորդությունների հանձնումը և կազի պահպանությունը:

զ) Հակագազով գործելուն վարժվելը,

2. Մարտիկի գործողությունները փոքրիկ դորամասերում:

ա) Արշավը և նրա պաշտպանությունը:

բ) Հետախույզ պահակի աշխատանքը:

զ) Առանձին դասակի պահպանողական կոփը:

3. Զորամասերի ստորաբաժանումների գործողությունները:

Անցնում են մոտավորապես նույնը, ինչ վոր «բ» կետում են հիշած, բայց ավելի խոշոր զորամասերում, անպայման ուշադրություն են դարձվում հրաձգություն վարելու հարցերի և զանազան տեսակի դենքերի շարժման և վիստորժակցության վրա։ Բոլոր յերեք դեպքերումն ել անհրաժեշտ շարունակ ստուգել մասնակցողների անհատական գործողությունները, նրանց գնահատությունը տեղադրության նկատմամբ, քիմիական տեսակներից և ողային ապահովության վերաբերմամբ և նրանց մեջ ուսումնական դիսցիլինա մտցնելու մասին։

Դաշտյելույթները և մասավանդ ռազմական զբու-  
սանքները պետք ե միացնեն իրենց մեջ վորոշակի  
դրված ռազմական թեմայի հետ միասին՝ նաև Փիդ-  
կուլտուրայի ռազմա-գործնական տարրերը, ուստի  
ցանկալի յե, վոր դաշտյելույթներ և զբոսանքներ կադ-  
մակերպելու գործում մասնակցեն ֆիզկուլտուրայի  
հրահանգիչները, իսկ պլանային աշխատանքների մշակ-  
մանը հրավիրվեն ֆիզկուլտուրայի համապատասխան  
Խորհուրդները: Ֆիզկուլտուրայի գործադրած տար-  
րերի թվին կարելի յե վերապերել՝

1) Վազք (զբոսս, սուրճանդակություն, վազք  
կարճ տարածության վրա):

2) Վուտութեր յերկարությամբ և բարձրությամբ:

3) Նետութեր հեռավորության վրա անըրիպու-  
թյան նպատակով:

4) Շարժական խաղեր. Փուտբոլ, բասկետբոլ,  
գնդախաղ:

5) Լող:

Յեթե մասնակցողների թիվը թույլ ե տալիս բա-  
ժանվելու յերկու կողմերի, այն ժամանակ յելույթը  
կարելի յե կազմակերպել այսպես.

Յելույթի ամբողջ այն մասը, վորը նվիրված է  
ռազմական թեմայի մշակմանը, յերկու մասի յե բա-  
ժանվում: Ժամանակի առաջին կեսը նվիրվում է  
տվյալ թեմայի հարցերի սկզբնական մշակմանը: Այս-  
տեղ առավելապես կիրառվում են զեկավարի ցուց-  
մունքը, նրա բացատրությունները, մասնակցողների  
առաջին պրակտիկան և այլն:

Յելույթի յուրաքանչյուր կողմը այդ առաջին կեսի  
ժամանակ պարապում է կամ միասին և կամ առան-

ձին և վորոշ ժամանակին դուրս ե գալիս լեկավար-  
ների միջև նախորդը պայմանավորված տեղը, վորտեղ  
կատարվում է մի փոքրիկ վերլուծություն և կազ-  
մակերպվում է հանգիստ (դադար):

Յերկրորդ կեսը կայանում է յերկեղողմանի պա-  
րապմունքի մեջ, վորտեղ կիրառվում են դրանից  
առաջ կատարված գործնական վարժությունները:

Այն կողմը, վորը ավելի վատ է գործում, հա-  
մարվում է հաղթված: Նման պարապմունքը նպաս-  
տում է նրա կենդանանալուն, իսկ յերբեմն դարձնում  
է այն հետաքրքրական մի խաղ: Կողմերը միասին են  
տուն վերադառնում: Վորպես կանոն, յերկեղողմանի  
պարապմունքը չպետք է սկսել առաջին յելույթներից,  
այլ ավելի նպատականարմար է սկսել յերրորդ յելույ-  
թից վոչ շուտ: Այն դեպքերում, յերբ մասնակցողների  
մեծ քանակը թույլ չի տալիս մշակելու ռազմական  
թեման մի կամ յերկու սովորող խմբերում, հարկա-  
վոր է ռազմական զբաղմունքի ընթացքում բաժանել  
նրանց մի քանի խմբերի այն հաշվով, վոր այդ խըմ-  
բերը պարապեն միաժամանակ: Այդ դեպքում ան-  
հրաժեշտ է նախորդը հոգալ խմբերի ղեկավարների  
մասին և, բացի այդ, ծրագրել ամեն խմբի մարդուարը  
կամ ռայոնը: Այդ ցուցմունքը վերաբերում է զլիսա-  
վորապես առաջին յելույթ-զբոսանքներին: Այն դեպ-  
քում, յերբ յելույթները ունենում են մասսայական  
բնույթ և բոլոր մասնակցողները իրենց վորոշ մասով  
պատրաստված չեն և չեն կարող միատեսակ ռազմա-  
կան գործնական աշխատանքի անցնել, — զբաղմունք-  
ները պետք է վարել պատրաստված մասի համար,  
վորը բաղկացած է մեծ մասամբ ռազմական գիտե-

լիքների խմբերի անդամներից և պահեստի զինվորներից, իսկ մնացած անպատճաստ մասնակցողների համար պետք ե կատարել համապատասխան ստորաբաժանումներ այն հաշվով, վոր նրանք մասնակնեն աշխատանքին միմիայն առանձին մասնավոր առաջադրությունների իրագործման մեջ:

Ուազմական զբաղմունքի վերջում անպատճառ պետք ե խիստ համառոտակի վերլուծել այդ զբաղմունքը: Այդ վերլուծությունը պետք ե կատարվի զրույցի ձևով ու տեղի ունենա մտքերի փոխանակություն զբաղմունքներին մասնակցողների միջև:

Զափազանց ոգտակար ե ընդհանուր վերլուծումների հետ միաժամանակ կատարել ուսուցման այս կամ այն ֆաղերի համառոտ վերլուծումներ իսկույն և յեթ, յերբ կհայտնիեն առանձին կոպիտ սխալներ կամ գերազանց գործողություններ: Յերբ նշանակված ուազմական թեման մշակված—վերջացած ե, անհրաժեշտ կազմակերպել դադար, ըստ վորում այդ ժամանակ հարկավոր ե սարքել այս կամ այն տեսակի ոգտակար զվարճություններ, վորոնց մեջ նշանավոր տեղ պետք ե բոնեն հրաձգությունը և սպորտը:

Քաղաքային մեծ կենտրոններից յելնելիս, պետք ե ընտրել այնպիսի ուայոն, վոր յելու յթին մասնակցողները կարողանան գնալ և յետ գառնալ արամիայով կամ յերկաթուղով:

Հավաքատեղին ընտրելիս, ինչպես նաև դատարի հանգստության համար տեղ ընտրելիս, անհրաժեշտ ե հաշվի առնել, վոր այդ տեղերում գտնվեն կոռպերատիվներ, ճաշարաններ, թեյատրներ կամ, համենայն դեպքություններ:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր յելույթներն ու զբոսանքները կազմակերպելիս անհրաժեստ ե մանրամասնորեն նախատեսել յուրաքանչյուր յելույթի նյութական ապահովության կազմակերպությունը: Յելույթները կազմակերպելիս պետք ե պահպանել խիստ դիսցիպլինա և համապատասխան տրամադրություն մասնակցողների մեջ:

Ո.Ս.ԶՄԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ամենալավ խթանն ԵՆ ՀԱՆԴԻՖԱՍԱՆՈՒՄ ՈՎԱԶՄԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱՆՆԵՐ

կան տգիտայիշայի և պրոպագանդի մեջ: Ուազմական ոգիտացիայի և պրոպագանդի այդ ձեերը հիմնվում են մասնակցողների անհատական և խմբական շահագրգության վրա, զարգացնում են նրանց մեջ մրցության, ակտիվության և խիզախության վոգի և մյուս կողմից հանդիֆասանում են բնակչության լայն խավերի համար ամենազրավիչ տեսարանները: Մրցությունների առանձին տեսակներին են պատկանում:

ա) Հրաձգության մրցություններ:  
բ) Ուազմական մրցություններ:  
գ) Ընդհանուր սպորտային մրցություններ բազմազան ծրագրներով:

Հրաձգության մրցությունները կազմակերպվում են յերկու տեսակ, նախ՝ մրցություն վորակյալ հրաժիգների մեջ, վորոնք անցնում են համապատասխան խմբակցությունների և ապա մրցություն տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության բոլոր ցանկացող բանվորների և գյուղացիների մեջ:

Ուազմական մրցությունների և կոնկուրսների թվին կարելի յե վերագրել հետևյալ տեսակները:

ա) հակագազը շուտ և կանոնավոր հագնելու մըցություն, բ) ոռումքերը հեռուն նետելու մըցություն, գ) շուտ և կանոնավոր կերպով խրամատներ շինելու և դիմակավորվելու մըցություն, դ) աչքաչափով տարածությունները արագ և ուղիղ վորոշելու մըցություն, յե) դիտողության մըցություն, զ) պատերազմի տեխնիկական միջոցները իմանալու և զրանցով սպառագինվելու մըցություն և այլն, ըստ վորում մըցության վերջին տեսակը կարելի յե կատարել վիճակախաղի ձևով, յերբ դուրս են քաշում տոմսակներ, վորոնց վրա առաջուց զրված են լինում վորոշ հարցեր։

Խաղմա-սպորտային մըցությունները, վորոնք չափազանց ոգտակար են ապագա կարմիր բանակայինի ֆիզիկական դարգացման համար, կարելի յե կաղմակերպել այս ծրագրով։

- 1) Վազք 100 մետր տարածությամբ;
- 2) Վոստումներ յերկարությամբ;
- 3) Դիսկ ու տեղ ձգելը;
- 4) Զգան քաշելը;
- 5) «Դարադկի» (городки);
- 6) Սուրհանդակային վազք 3000 մետր տարածության վրա։

7) Խմբական վազք խորդ ու բորթ տեղում, արգելանքներով։

- 8) Լող ու թիավարություն.
- 9) Սուրերամարտ և կոփկ տոփաններով (եսպադրոն)։

Վորպես ուսպանական մըցության հատուկ տեսակներից մեկը, պետք ե առանձնացնել վայրի կամ քարտեզի վրա ուսպանական խնդիրների լուծման կոն-

կուրսը։ Այդ աեսակ կոնկուրսներին պետք ե զրավել առաջին հերթին պահեստի հրամկազմին, ուսպանական դիտելիքների խմբերի ունկնդիրներին և բոլոր ցանկացողներին։ Կոնկուրսի կազմակերպությունը պարզ է, ուսպանական զեկավարը, վորը գլխավորապես լինում է ավագ կամ միջին հրամկազմից, առաջարկում է ներկա յեղողներին մի վորե խնդիր, ամեն մասնակցող աշխատում է ինքնուրույն և իր լուծումը հաղորդում և բոլոր ժողովականներին։ Քննադատության մասնակցում են բոլորը։

Վերջնական վճիռը պատկանում է Ժյուրիին։ Նույն կարգով է կատարվում վայրի վրա կատարվող խնդիրների լուծումը։ Կոնկուրսին մասնակցողին, վորը ամենից լավ և վճռել խնդիրը, արվում է պարզ։ Տակտիկական խնդիրները կարող են դրվել զանազան թեմաներով, հետախուզական, հրձիք բաժնյակի և զասակի հարձակման հետ կապ ունեցող, զանազան տեսակ գենքերի փոխազդեցության թեմայով, գնդացիրների և հրետանու դրույթի մասին, կապի կազմակերպության և պահպանության թեմայով արշավի ժամանակ, դիրքերում, կովի մեջ և այլն։

Առանձին դեպքերում ցանկալի յե տակտիկական խնդիրների լուծումը կատարել ավագով լի արկդի վրա։ Հետագայում աստիճանաբար կարելի յե անցնել ավելի բարդ կոնկուրսների՝ ուսպանական խնդիրները լուծելու մեջ, վորոնց կմասնակցեն յերկու կողմերն ել և ավելի խոշոր ստորամասերը։ Ինչ վերաբերում է մասսայական շարժական և սպորտային խաղերին, այստեղ նախապատվություն պետք ե տալ այն խաղերին, վորոնք դարձացնում են մարտիկի համար անհրաժեշտ

հատկություններն ու վարժությունները, — կարգադրանություն, ճշտապահություն, համառություն, նախաձեռնություն, դիտելու ընդունակություն, տեղադրության և ժամանակի մեջ գլուխ հանելու սովորություն, տոկունություն, անվրիպություն, Այնուհետև ցանկալի յենախապատկություն տալ այնպիսի խաղերին, վորոնք կատարվում են խմբերի և զորամասերի մասնակցության սկզբունքով, վորովնետե դանապատում են համաձայնեցրած գործողությունների վարժությունները յուրացնելուն, նպաստում են հասկանալու իր և իր զորամասի պարտականությունները, զարգացնում են թշնամու սխալները հաշվի առնելու ունտկությունը և այլն:

Այն վարժություններն ու խաղերը, վորոնք զարդացնում են ճարպիկություն, արագություն, տոկունություն և խելամտություն, հարկավոր են վճռականապիս գերադասել այն խաղերից, վորոնք զարգացնում են համբաշարժ կոսկիտ ուժը (վարժություններ գերաններով, տուրնիկների վրա, թոկեր քաշելը և այլն):

Մի քանի խաղեր զարգացնում են ռազմա-գործնական ունակությունները: Դրանց թվին են պատկանում ռումբեր ձգելու վարժությունները, վորին ոգոնում են «գարագիկ» (городки) խաղը: Զափազանց արժեքավոր են այնպիսի խաղերը, վորոնք պահանջում են վազք բարդ վոստումներով և նետումներով, հարմարվելով տեղադրությանը:

Խաղերը սովորեցնում են կատարել վորոշ կանոններ: Հենց դրանով նրանք վարժեցնում են ապագա կարմիր բանակայինին դիտակցորեն յենթարկվելու

խաղի կանոններին, կոլեկտիվի ընդհանուր կարգապահությունը, ավագ ղեկավարի ցուցմունքներին և դատարանի վճիռներին: Խաղերը նպաստում են նախաձեռնության զարգացմանը, վորովնետե խաղի կանոնները բազմաթիվ հնարավորություններ են տալիս համեմու նպատակին զանազան միջոցներով: Ամեն խաղի մեջ հաղթում են միշտ նա, ով արագորեն և հաջողությամբ հնարում են լավագույն միջոցներ իր զորամասի հաջողության համար: Մենք չենք թվի այստեղ մանրամասնորեն զանազան խաղերը, այլ թողնում ենք դրանց ընտրությունը տեղերում ակումբների և քաղլուսավարական կազմակերպությունների ղեկավարներին:

#### IV. ՄԱՍԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Մինչև այժմ կապը նկատվում է չափանիքի ԱՇԽԱՏԱՅՆ ՎԱՐԴԱՆ Թույլ Ոսուավիաքիմի և բանշնուրի ՊԱՅՑ ՎՈՐԱԿԱՆ ակումբների, լուս. տների, ՄԱՆՈՒՐԻ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐԳԱՐԱՆՆԵՐԻ և Կարմիր անկյունների միջև: Մինչև այժմ ակմբային աշխատանքի կազմակերպիչներն ու ղեկավարները, Ոսուավիաքիմի կուլտհանձնաժողովներն ու բջիջները չեն կարողանում ձեռք քաշել այն սովորություննից, վոր ռազմական աշխատանքը դնում և վարում են հարվածային մեթոդներով (պաշտպանության մեկ շաբաթնյակից մինչև մյուսը, Կարմիր բանակի մեկ տարեղարձից — մյուսը): Հասել են ժամանակը, յերբ ռազմական պրոպագանդի հարվածային մեթոդներից մենք պետք ենք անցնենք ամենուրի ասիստեմատիկ աշխատանքին աշխատավորների լայն մաս-

սաների ուղղմական լուսավորության գործում: Այդ նպատակների համար ռազմական պրոպագանդը, Ոսո-ավիաքիմի գաղափարների պրոպագանդը անհրաժեշտ ե կապել ակումբի, խրճիթ-ընթերցարանի և այլն աշխատանքի պլաններին: Ակումբի, Խրճիթ-ընթերցարանի ամենորյա պլանի մեջ ռազմական պրոպագանդի խորացման գլխավոր պայմաններից մեկն այն ե, վոր ակումբների վարչության և հանձնաժողովների մեջ շարունակ մասնակցություն ունենան Ոսո-ավիաքիմի բջիջի ներկայացուցիչները:

Ոսո-ավիաքիմի բջիջը ինքը պիտի հոգա այն մասին, վոր ակումբի կամ խրճիթ-ընթերցարանի հերթական պլանի մեջ բավարար չափով գտնվեն յերկը պաշտպանության, ավիացիայի, քիմիայի և այլն հարցերը: Յենթաղրենք, վոր ակմբային աշխատանքի տվյալ շրջանում պետք ե կարդացնել չորս դասախոսություն: Անհրաժեշտ ե հոգալ, վոր այդ դասախոսություններից մեկը նվիրված լինի ռազմական պրոպագանդին: Պլանի մեջ կան կինո-սինաները: Հարկավոր ե աշխատել, վոր այդ կինո-սինաներից մեկը նվիրված լինի համարատասխան ռազմական ֆիլմին: Պլանի մեջ նշված են ընտանեկան յերեկույթներ: Հարկավոր ե ձգտել վոր հատկացվի մի անկյուն Ոսո-ավիաքիմի բջիջին, վորտեղ կարելի լինի կադմակեպել հետաքրքիր ցուցահանդես, գրքերի վաճառում, վիճակախաղ և այլն, կախել մի շարք համար շենք համարագրում և իր գաղափարանի համար պահանջվող գրքերի ցուցակը: Ոսո-ավիաքիմի բջիջը կամ ռազմական աշխատանքի ուղղությունը կույրում են իրար հետ՝ բջիջին յերեկույթի ժամանակ մի անկյուն տալու առթիվ: Բջիջի ներկայացուցիչները պնդում են, վոր վարչությունը այդ նպատակների համար շենք համարագրում ամիսը մի անգամ, վարչությունը ապացուցում ե, վոր դա անհնարին եւ Յերկու կողմերն ել գաղափում են և յերկուսն ել, կարծես, իրավացի յեն: Իսկ մոտիկ տեղում գտնվում ե ակումբի բուժետը: Այստեղ միշտ բազմաթիվ մարդիկ կան, վորոնք սեղանների շուրջը խոսում ու տաք-տաք վիճում են: Բայց

վոչ վարչության և վոչ ել բջիջի մտքով չի անցնում, վոր բուֆետում կարելի յե ծավալել մեծ աշխատանք:

Բուֆետում աշխատելու համար կազմակերպիչը ամենից առաջ պետք ե հաշվի առնի, թե ի՞նչ ե ներկայացնում բուֆետի շինությունը:

Բուֆետը ամենաքիչը ունենում ե յերկու պատ, յեթե գտնվում ե փոյեյի անկյունում և նույն իսկ չորս պատ, յեթե նրան առանձին սենյակ ե հատկացված: Բուֆետում սովորաբար կան մանր սեղաններ, վորոնց շուրջը միաժամանակ կարող են նստել 2—5 մարդ: Բուֆետ գալիս են կարճ ժամանակով — թեյ յեն խմում, բուտերբրոտ ուտում, նստած մի քանի ըոպե և հեռանում, զիջելով իրենց տեղը ուրիշն: Ուրիշ խոսքով՝ բուֆետում մարդիկ հոսուն տարր են կազմում: Տևական ծրագրային վոչ մի աշխատանք այստեղ ծավալել չի կարելի: Դա կխանգարե բուֆետի կյանքի կանոնավոր ընթացքը: Իսկ ի՞նչ կարելի յե անել այդտեղ, Առաջինը՝ ոգտագործել պատերը: Միայնակ այցելուն նստած թեյ յե խմում և նայում չորս կողմը: Հարկավոր ե բռնել նրա հայացքը և տալ նրան դիտողական կարգով մի վորեն գաղափար: Պատերը առանձնապես հարմար են լոգունգների, կոչերի և խայտաբղետ պլակատների համար. անմիտ բան ե, յերբ այն բոլորը, ինչ արտացոլում ե Ոսո-ավիաքիմի աշխատանքը, հավաքում են մի տեղում, որինակ, ինքնապաշտպանության անկյունում, ինչպես հաճախ դա անում են ակումբում: Լողունգները և պլակատները, վորոնք մասսայի հետ են խոսում, պետք ե գտնվեն բոլորի աչքի առաջ, այստեղ, վորտեղ շատ մարդիկ կան: Բուֆետը շատ հարմար ե դրա համար:

Բուֆետ մտնում են վոչ միայն միայնակ մարդիկ, այլ և նոտում են այստեղ 2—3 հոգուց բաղկացած խմբակներ: Պետք ե գտնել նրանց նետ զրուցելու թեմաներ: Լողունգը դրա համար քիչ ե, վորովհետև նա պնդում ե մի վորեն միտք, բայց չի դրդում խորհելու: «Անցեք բոլորդ Խորհրդային Միության պաշտպանությանը», «Գրվեցեք հրաձգության խմբերում»: Այստեղ մտածելու բան չկա, խոսելու բան ել համարյա չկա, այլ պետք ե ընդունել միայն և դրա համաձայն գործել: Լողունգների՝ կողքին պետք ե դնել մի ուրիշ բան ևս, պատերի վրա շարել հարցեր, վորոնք պահանջում են մտածել ու քննադատել: Փոխանակ «գրվեցեք հրաձգության խմբում» լոգունգի, կարելի յե հարց դնել. «Ու՞ր ավելի լավ ե գրվել, հրաձգության խմբում», թե լուսանկարչական խմբում»: Այդ ձեռվ հրաձգության խմբում գրվելու հարցը կասկածի տակ ե ընկնում: Դա ստիպում ե մտածել, առաջացնում ե խոսակցություններ: Միևնույն ժամանակ այդ տեսակ հարցի կոչական ուժը նվազ չի լինի այն կոչից, վորը արված ե դրական ձևով: Հարցերի նման պլակատը անպետք կլիներ միջանցքում կամ սանդուխքների վրա, վորտեղ մարդիկ մի քառորդ ըոպեյում նստում ու անցնում են: Այդտեղ պիտի խոսել դրական կամ յերբեմն նաև հրամայական ձևով: Իսկ ըուֆետում այս տեսակ հարց-պլակատները խիստ տեղին կլինեն: Կարելի յե բերել ուրիշ որինակներ: «Ակումբը» 200 ոռուբլու կարիք ե զգում տիր շինելու համար: Ի՞նչ անենք: Կամ «Այդ ի՞նչ ե նշանակում — Կարմիր ջուհակ» գործարանում 2000 աշխատող կանայք կան, իսկ սանիտարական խմբում

գրված են 60 աշխատավորուէիներ։ մեզանում 1500  
աշխատավորուէիներ կան, իսկ սանիտարական խումբը  
մինչև 10 մարդ ունի։ Ինչքն ե այդ։

Բայց բավական չե միայն մտքեր տալ, հարցեր  
դնել, հարկավոր ե փաստեր և նյութեր բերել։ Մեր  
վերջին որինակը տալիս ե նաև նյութ։

Յերկրորդ խնդիրն այն ե, վոր գտնենք հարմար  
տեղ և նյութերը տալու հարմար ձև։ Առկմբի բուժեաի  
սեղանի մեջտեղը համարյա միշտ աղատ ե լինում։  
Ռեստորաններում, և ճաշարաններում սովորաբար  
թերթեր են լինում պլեյս-կուրանտով, վորտեղ  
ուտեկեղենների արժեքներն են գրված։ Թերթերը  
այնպես են դրված, վոր յերկու հակառակ կողմերն  
են նայում, կարելի յե ոգալիք այդ թերթերից, վոր-  
պես նյութեր հրամցնելու ձևերից։ Կարելի յե այդ  
տեսակ թերթեր դնել ակումբի բուժեատում, բայց գների  
փոխարեն տեղավորել նրանց վրա լուրեր Ոսո-ավիա-  
քիմի բջիջի, նրա առանձին խմբերի աշխատանքի մա-  
սին, տեղեկություններ Սրեմոյան Յելբոպայի վերջին  
գյուտերի, մեր ռայոնում վնասարարների դեմ կա-  
տարված քիմիական կովի հաջողությունների մասին  
և այլն։ Կարելի յե այստեղ տեղավորել և տեքստը,  
և գծագրություններ, և դիտարաններ։ Սակայն տեքստը  
պետք ե գրել գրամեքենայով, իսկ նկարները կանեն  
տեղական նկարիչ-սիրողները։ Սեղանի այս տեսակ  
թերթերի համար նյութեր կարելի յե քաղել Ոսո-  
ավիաքիմի տեղական թերթից և այլ ժուռաններից,  
իսկ հիմնական նյութը, իհարկե, պետք ե  
վերցնել Ոսո-ավիաքիմի տեղական ռազ-  
մական աշխատանքի փորձից։

Պատեցի և սեղանների վրա չպետք միանույն նյու-  
թերը պահել։ Պարտադիր չե նաև, վոր հին նյութը  
անհապաղ փոխարինվի նորով։ Ոսո-ավիաքիմի բջիջը  
կարող ե ոգտագործել ակումբի բուժեատը շաբաթվա մեջ  
2 կամ 3 որ, թողնելով մյուս որերը ուրիշ կազմա-  
կերպություններին։ Ցանկության և ուշադրության  
դեպքում, հմտորեն հաշվի առնելով տեղական պայ-  
մանները, կարելի յե գտնել աշխատանքի ուրիշ շատ  
ձևեր ևս վոչ միայն ակումբի բուժեատում, այլ և  
ակումբի այլ սենյակներում։

ԴԵԿՈՒՑՈՒՐ-  
ՆԵՐ. ԴԱՅԱ-  
ԽՈՍՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐ, ԶՐՈՒՅԵ-  
ՆԵՐ, ՀԱՐՑ ՈՒ-  
ՊԱՑՈՒՍ-  
ԽՍՆՆԵՐԻ ՑԵ-  
ՐԵԿՈՆԵՐ  
Դասախական աշխատանքը ակումբի  
մասսայական աշխատանքի հիմնական  
ձևերից մեկն ե։ Նա նպաստում ե հա-  
սարակական աշխատանքի մեջ հասա-  
կավոր բանվորներին, բանվորուհուն և  
յերիտասարդությանը ներզրավելուն,  
զարթեցնում ե մասսայի մեջ նախնա-  
կան հետաքրքրություն ռազմականացման հար-  
ցերի վերաբերմամբ և հենց դրանով հանդիսա-  
նում ե նանախապատրաստական աստիճանը ռազ-  
մական աշխատանքի զանազան տեսակ խորացրած  
ձևերի զարգացման համար — խմբական և ինքնա-  
զարգացման։

Նկատի առնելով մասսաների աճող պահանջը, նրա  
սոցիալական և ընդհանուր զարգացողական մակար-  
դակի տարբերությունը, դասախոսական աշխատանքի  
պրակտիկան առաջ ե քաշում մասսայական դասախո-  
սական աշխատանքի մի շարք առանձին ձևեր։ Նրա  
ամենից պարզ, մատչելի և տարածված ձևն ե զեկու-  
ցում — դասախոսությունը։ Դասախոսը անհրաժեշտ

ժամանակի ընթացքում և առանց ընդհատելու պարզաբանում ե համապատասխան հարցերը։ Պարզաբանության ժամանակ գեկուցման նյութը ցանկալի յե համապատասխան ձևով պատկերավորել։

Այնուհետև դասախոսական աշխատանքի պրակտիկայի մեջ բավական աչքի ընկնող տեղ են սկսել բոնել ամբողջական դասախոսությունները, վորոնք իրենց բնույթով ավելի մեծ ակտիվություն են մըտցնում լարանի մեջ, ավելի մեծ հետաքրքրություն են առաջնում և նկատի ունեն ունկընդիրների ավելի պատրաստված կազմեր։ Ամբողջական գեկուցումը ավելի բարդ է, քան սովորական դասախոսությունը, վորովինետև նրա մեջ մասնակցում են միանգամից մի քանի դասախոսներ, առանձին դիսցիլինաների ներկայացուցիչներ, վորոնք միացնում են պարզաբանող նյութը մի վորեե առանցքի շուրջը։

Ագիտացիոն-մասսայական աշխատանքի հետեւյալ տեսակը մեծ առողիտորիաներում կարելի յե համարել զեկուցում-դիսպուտները, վորոնց մեջ առողիտորիայի առաջ զեկուցողներն ու նրանց հակաճառողները քննում են վորեե պրոբլեմ յերկու կամ մի քանի հակառակ տեսակետներով, ըստ վորում, յերբ զեկուցողը վերջացնում ե իր նյութը, վիճաբանությանը խառնվում են — առաջուց զբույսուկաբույզ — ցանկացողները։

Վերջապես կարելի յե բերել մասսայական ագիտացիայի մի ուրիշ ձևը ևս, վորը մեծ հետաքրքրություն ե առաջ բերում մասսաներում, — դա հարց և պատասխանների յերեկոներն են։

Ակումբներում դասախոսական թվաների կան աշխատանքը կազմակերպությունների պելու ժամանական ուշադրություն պետք ե դարձնել թեմաների ընտրություն վրա, մանավանդ այն ակումբներում, վորտեղ դասախոսական աշխատանքը նոր միայն սկսում ե ծավալվել։ Թեմաները ընտրելիս պետք ե առաջնորդվել ինչպես ունկընդիրների պահանջներով, վոր բղխում են նրանց դարդացման աստիճանից, նույնպես և քաղաքական ընդհանուր դրությամբ և ուազմականացման հերթական խնդիրներով։ Ունկնդիրների պահանջները կարող են հայտնաբերվել կուլտուրթական և ուազմական լիազորների միջոցով, այլ և նախնական զրույցների միջոցով այն մասին, թե ինչպիսի դասախոսություններ են ցանկանում նրանք լսել. տոմսակների միջոցով, վոր գցում են առանձին արկղների (բոլոր ակումբներում կան այդ տեսակ արկղներ) մեջ, առաջուց քանվորների և ծառայողների մեջ տարածելով դասախոսական աշխատանքի թեմաների պլանները։

Դասախոսական աշխատանքի ծավալման սկզբում հարկավոր ե բավականանալ պատահական դասախոսություններով, վորոնք նվիրված կինեն առորյա հրատապ խնդիրներին, հետազայում արդեն հարկավոր ե անցնել ցիկլերով կատարվող դասախոսություններին, ունենալով ամեն մի ցիկլում 2 կամ 3 թեմա։

Թեմաների ընտրությունից հետո ՀԱՅԱՐԱՐՈՒ- պետք ե հոգալ ունկնդիրներին իմաց թօնին տալու և հրավիրելու մասին։ Բավարար քանակությամբ և լավ կազմած աֆիշան նշանա-

վոր չափով կնպաստե մնծ քահակությամբ այցելու-  
ներ ունենալուն։ Փորձը ցույց ե տալիս, վոր յերբ  
ոեկլամի վրա ուշադրություն չեն դարձնում և հայտա-  
րարությունը վատ ե կազմվում, — լավ ծըագրված  
զեկուցումները և մասսայական աշխատանքի այլ ձևերը  
հաճախ խանգարվում են։ Դասախոսության կամ զե-  
կուցման մասին հայտարարություն ամենից լավ ե  
անել բջիջների ագիտազրուների կենդանի կապի միջո-  
ցով, համքարությունների կամ կուտիազորների միջո-  
ցով հենց ձեռնարկությունների մեջ աշխատանքի ժամա-  
նակ՝ բարձրածայն հայտարարելով թեմայի անունը,  
մոտավոր բովանդակությունը, տեղը և դասախոսու-  
թյան ժամանակը։ Բացի այդ, լավ կլինի, յեթե  
գրամեքենայով տպված փոքրիկ թուցիկները փակ-  
ցվեն գործարաններում աչքի ընկնող տեղերում և կամ  
այդ թուցիկները բաժանվեն մարդկանց։ Հանձնա-  
րարվում ե նաև, յեթե տեխնիկական պայմանները  
թույլ են տալիս, նախապես տոմսակներ ցըել դասա-  
խոսության համար։ Աֆիշաները պիտի կազմվեն կեն-  
դանի կերպով, աչքի ընկնեն, տան դասախոսության  
համառոտ ծրագիրը և կախվեն ձեռնարկության դար-  
պասի մոտ և ակումբի դրսի պատին։ Մի քանի խոսք  
դասախոսության տեխնիկական նախապատրաստման  
մասին, վոր առաջին հերթին՝ վերաբերլում ե դահ-  
լիճին։ Ամենից լավ ե ընտրել դասախոսության համար  
անանցանելի սենյակ։ Աթոռների սովորական կարգն  
ել ցանկալի յե փոխել, այն ե՝ զնել աթոռները կի-  
սազդանի ձևով և զեկուցողը այդ դեպքում պետք ե  
յելնե դահլիճի միջից և վոչ թե բեմից, վորպեսզի  
նրա կապը ավելի սերտ լինի ունկընդիրների հետ։

Եյնունետե, դասախոսությունն սկսելուց առաջ անհրա-  
ժեշտ ե նախորոք հարմարեցնել լավագերը և ստուգել նրա  
լույսն ու մթացումը և վոչ թե դա անել այն ժամանակ,  
յերբ բոլորն արդեն հավաքված են։ Դասախոսության  
սկզբում, դասախոսի ցուցումով, ակումբի գրադարանում  
պիտի սարքել ուազմական գրականության ժողովրդա-  
կանացրած ցուցահանդես, վորը պիտի կապ ունենա  
դասախոսության թեմայի հետ։ Իսկ ավելի լավ ե  
կազմակերպել գրքերի և բրոցուրների փոքրիկ ցու-  
ցահանդեսներ հենց զահլիճում։ Յեթե գրադարանում  
կամ Ստուգիաքիմի անկյունում պատշաճ գրականու-  
թյուն չի ձարվի, այդ դեպքում անհրաժեշտ ե գոնե  
ցուցադրել տվյալ հարցին նվիրված գրքերի ցուցակ,  
վորոնք վաճառվում են շուկայում։ Բացի դրանից,  
դասախոսությունն սկսելուց առաջ դահլիճում, ամ-  
բիոնի մոտ կամ ակումբի մուտքի մոտ նպաստակահար-  
մար ե բաժանել նախապես պատրաստված թերթիկ-  
ներ, վորոնց վրա կդրվեն հարցեր՝ զեկուցողին տալու  
համար։ Դասախոսության ժամանակը ընտրելիս, վոր-  
ուեսողի խանգարմունքներ չկան և քեզ մարդիկ չայ-  
ցելեն դասախոսությանը, հարկավոր ե նախապես  
հաշվի առնել ոռնիկ ստանալու, կուսակցական և պրոֆ-  
միութենական որերը և ձեռնարկություններում կամ  
հիմնարկություններում տեղի ունեցող այլ խմբում-  
ներն ու ժողովները։ Զեկուցումը փոխելուց կամ ուրիշ  
որ գցելուց խուսափելու համար հարկավոր ե անցնել  
որացուցային պլանի սխանմին, ապահովելով ուազ-  
մական աշխատանքի համար ակումբի վարչության հետ  
համաձայնեցրած վորոշ որեր։

ԱՌԵԴԻՏՈՐԻԱ-  
ՅԻ ԱԿՏԻՎՈՒ-  
ԹՅԱՆ ՅԵՎ  
ԻՆՔՆԱԳՈՐԾ-  
ՆԵՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ

ՊՈւրագանչյուր քաղլուսա-  
վարական աշխատանքի հիմ-  
նական խնդիրը կայանում է  
նրա մեջ, վոր հայտնաբերվի  
մասսաների ակտիվությունն  
ու ինքնագոծներունը: Դա-  
սախոսական աշխատանքի մեջ այդ կանոնը ամբող-  
ջությամբ պետք է պահպանվի: Այն դասախոսություն-  
ներն ու զեկուցումները, վորոնք լինում են առանց  
հարցերի ու զրուցների ունկընդիրների կողմից, —  
պետք է համարել անհաջող: Այն դեպքում, յերբ դա-  
սախոսը չի կարողանում առաջ բերել առողիտորիայի  
կողմից հանդիպական հարցեր և յելույթներ, ցան-  
կավ յե կազմակերպել ակտիվի պարտադիր յելույթ-  
ներ, վորը նախապես պետք է հրահանգված լինի այդ  
մասին: Առհասարակ բոլոր ընդարձակ առողիտորիանե-  
րում ցանկալի յե, վոր ներկա գոտվեն ակտիվիստները՝  
ուղարկան գիտելիքների համապատասխան խմբերից:

Բավական չե պատրաստել և կար-  
գեկութունը դալ լավ դասախոսություն, հարկա-  
ՅԵՎ ՀԱՇՎԱՐ- վոր ե նաև հոգալ դրա արդյունքների  
ԿՈՒԹՅՈՒՆԸ մասին: Դասախոսության կամ զեկուց-  
ման վրա պետք ե նայել վոչ վորպես  
նպատակի, այլ վորպես միջոցի, վորը նպաստում է  
ունկընդիրների ընդհանուր մտավոր զարգացման  
բարձրացմանը, դրդում ե նրանց հետագայում ևս աշ-  
խատելու ինքնազարդացման կամ ակումբային աշխա-  
տանքի խորացրած ձերով: Դասախոսական աշխա-  
տանքի ամրացման համար անհրաժեշտ է առաջին  
հերթին կարգավորել նրա հաշվարկությունը քանա-

կական և, մանավանդ, վորակական տեսակետից, մո-  
տավորապես այս պլանով.

1) Ի՞նչպես անցավ զեկուցումը (ընդհանուր գնա-  
հատություն):

2) Վարչակով եր հանրամատչելի այն:

3) Ի՞նչ տպագորություն ե գործել զեկուցումը  
ունկընդիրների վրա:

4) Դասախոսի առավելություններն ու պակասու-  
թյունները:

5) Առողիտորիայի ակտիվության աստիճանը:

6) Ի՞նչքան հարցատումսակներ են ստացվել:

7) Քանի՞ մարդ են խօսել:

8) Հարցերը ի՞նչ բնույթ ունեյին:

9) Ի՞նչ հարցեր մութ մնացին և ի՞նչու:

10) Առողիտորիան ինչի՞ն ե ավելի հետաքրքրու-  
թյամբ վերաբերվում:

(Վերջի հարցի հիման վրա կարելի յե հաշվի առ-  
նել, թե ինչպիսի թեմաներ պետք ե դնել հետա-  
գայում):

11) Դասախոսությունների նոր ցիկլ դնելու ան-  
հրաժեստությունը հասունացնել ե արդյոք և ի՞նչ բնույթ  
պիտի ունենա այդ ցիկլը:

12) Կան արգյուք հիմքեր կազմակերպելու ժամա-  
նակավոր կամ մշտական խումբ տվյալ հարցի մասին:

13) Հասունանում ե համապատասխան կոնսուլ-  
տացիայի և ինքնազարդացման խմբակցության կազ-  
մակերպության անհրաժեշտությունը:

14) Ի՞նչպես անդրադառն դասախոսություն-  
ները գրադարան հաճախելու և համապատասխան  
գրականություն ընտրելու վրա: Հնարավոր ե մա-  
նավանդ այդ աշխատանքի ժամանակ «վորսալ» ուն-  
կընդիրներ ըրուր դասախոսությունները մշտապես և  
ակտիվ կերպով հաճախողների միջից: Յեթե պատշաճ  
կերպով մոտենանք այդ ընկերներին, նրանց հետա-  
գայում:

գայում կարելի կը իներ զբավել աշխատանքի պահի  
խորացած ձեռքի մեջ — ուղմական զիտելքների  
խմբերում և այն:

ԹԵՐԱՆԵՐԻ Մաղմական դասակառությունների  
ՈՐԻ ՆԱԿԵԼԻ և զեկուցումների հարցը վերջացնելու  
ՅԵՎԱՐՈՏԱՎՈՐ համար նախակահարմար և բերել  
ՅՈՒՅԱԿԸ ԶԵ- ցուցակը այն թեմաների, վոր կարելի  
ՅԵՎ ԴԱՍԱ- յե հանձնարարել ինչպես բանվորական  
ԽՈՍՈՒԹՅՈՒՆ- լայնառողիտորիայի համար՝ ակումբային  
ՀԱՐՄԱՆ քաղլուսավարական աշխատանքի սլա-  
ՆՈՎ, ՆՈՒՅՆՊԵՍ և հատուկ առողիտորիաների համար  
(պահեստի հրամկադմ և այն):

Հարմարության համար մենք կնշենք հետեւյալ ցիկ-  
լերը ուղմական պրոպագանդի առանձին ճյուղերի  
վերաբերմամբ:

ԳԱԾԱՆՈՍՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ա) Արդյունաբերություն.  
Բ) Գյուղատնտեսություն.  
Ց) Վառելք.  
Դ) Տրանսպորտ.  
Ե) Լավա.  
Ղ) Ֆինանսներ.  
Ե) Առևտուր.  
Ղ) Բնակչությունը և աշխատանքը:

Այդ ցիկլի բոլոր հարցերը հարկա-  
վոր ե կապել ժողովրդական անտեսությունը յերկըի  
պաշտպանության համար նախապատրաստելու հետ:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդ ուրվա-  
գծի մեջ պատշաճ տեղ սիստի հատկացնել ինդուս-  
տրացման և զյուղատնտեսության կոլեկտիվացման  
պրոբլեմներին՝ պրոլետարական պետության ինքնա-

պաշտպանության ունակությունը ուժեղացնելու տե-  
սակետից: Առանձին ձեռնարկություններում և գոր-  
ծարաններում, վորոնք զործում են կամ զործել են  
անցած պատերազմի ժամանակ պաշտպանության  
համար, անհրաժեշտ և ոգտագործել յեղած արխիվա-  
յին նյութերը, վորոնք վերաբերում են տվյալ գոր-  
ծարանների՝ պատերազմի ժամանակ ուղմական  
արտադրանք պատրաստելուն: Այդ նյութերը մշա-  
կելիս՝ առանձին ձեռնարկություններում և գործա-  
րաններում կարելի յե կատարել պետական նշանա-  
կություն ունեցող չափագանց կարևոր աշխատանք,  
հաշվի առնելով անցյալում կատարված սիալները,  
վորպեսզի ապագա պատերազմի պայմաններում չկա-  
տարվեն այդ սիալները: Նույն այդ թեմաների շուրջը  
կարելի յե ծավալել վոչ միայն դասախոսական աշխա-  
տանք, այլ և խմբական և գիտական — հետազոտական:

ա) Ելեկտրոտեխնիկայի կիրառումը  
ԴԱՍԱՆՈՍՈՒ- ուղմական գործում: բ) Բաղմա — ին-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ցեներական գործի մասին:  
Ց) Տեսանի- կա) Մաղմաշինարարական գործի  
ԿԱՆ ՏԵՍԻ- մասին:  
ԱԱՅԻ ՀԱՅԻ- բ) Շուրջը մասին:  
ՐԻ ՇՈՒՐՋԸ գ) Մաղմական կապի մասին.

յե) Մաղմական տրանսպորտի և գրա աշխատանքի  
պայմանների մասին պատերազմի ժամանակ:

Գործառնական թեմաների թվին են  
ՑԻԿ ՌԱԴՐԱ- պատկանում:

ա) Մաղմական գործողությունների  
ԳՈՐԾՄԱՆ ՆԵՐ- մեր Արեմտյան ուղմաբեմը և նրա  
ԱՆՆ ՅԵՎ ՌԱԶ- աղդեցությունը կարմիր բանակի ուղ-  
ՄԱՆ ՏԱԿՏԻԿԱ- մական միավորությունները կաղմա-  
ՆԵՐԻ ՄԱՅԻՆ կերպելու և ուղմական ընդհարումների ընթացքի վրա:

բ) Ժամանակակից բանակի և հրետանու թիկունքի  
 կազմակերպչական աշխատանքը:  
 գ) Ժամանակակից պատերազմի պայմաններում  
 ծավալվող գործառնական հարցերը:  
 դ) Հակառակին ինքնապաշտպանության պրոբ-  
 լեմները մեր պայմաններում:  
 յԵ) Համաշխարհային և ապագա պատերազմների  
 նյութական պայմանների տարբերությունը:  
 զ) Հետևակ դորքի և հրետանու փոխորդակցու-  
 թյունը ժամանակակից կովում:  
 ե) Ինչի՞ն են կազմված ժամանակակից կովի  
 հիմնական տարբերը:  
 ը) Գործառնությունների նյութական թափը հա-  
 մաշխարհային պատերազմում և այլն:  
 թ) Գիշերային գործողությունները ժամանակա-  
 կից պատերազմում:  
 ժ) Գնդի ինքնապաշտպանությունը ուազմի ճա-  
 կատներում ժամանակակից տակտիկայի, կազմակեր-  
 պության և տեխնիկայի պայմաններում:  
 ա) Ողաշքիմիական հարձակման ժա-  
 ռութեական մանակակից միջոցները:  
 բ) Ռազմական թունավորող նյու-  
 թերը և նրանց գործադրությունը:  
 դ) Ողաշքիմիական ինքնապաշտպա-  
 նության ակտիվ միջոցները:  
 յԵ) Ողաշքիմիական ինքնապաշտպանության տակ-  
 տիկան և կազմակերպությունը:  
 զ) Ողաշքիմիական ինքնապաշտպանությունը բնա-  
 կարանային ընկերություններում:  
 ե) Գաղերից պաշտպանիելու ապաստաբանները,  
 նքանց շինությունը և ոգտագործումը:  
 ը) Ողաշքիմիական ինքնապաշտպանությունը և  
 սննդամթերքների պահպանությունը:

թ) Քիմիան մարդու սպասին խաղաղ ժամանակի:  
 ժ) Դաշտերի, այդիների վնասատուները և պայ-  
 քարը նրանց դեմ:  
 ի) Ռազմա-սանիտարական ծառայությունը և քի-  
 միական կովի պայմանները և այլն:  
 ա) Ինչով եռժեղ կարմիր բանակը:  
 ԿԱՐՄԻՐ ԲԱ-  
 ՆԱԿԻ ՇԻՆԱ-  
 ՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
 ՊԱՍԱՆՈՍՈՒ-  
 ԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ՑԻԿԼ  
 բ) Յերկրային սփառեմը, մինչդորա-  
 մասային նախատրաստության, քաղա-  
 քական աշխատանքի տեղը կարմիր բա-  
 նակի գաստիարակության և ուսուց-  
 ման ընդհանուր սփառեմի մեջ:  
 գ) Կոմյերիտմիությունը և նրա դերը կարմիր  
 բանակի և նավատորմի շինարարության մեջ:  
 դ) Լենինը և կարմիր բանակը:  
 յԵ) 1924 թվականի ռազմական բարենորոգության  
 եյությունը:  
 զ) Քաղաքական աշխատանքը պատերազմի ժա-  
 մանակ:  
 ե) Գրավելիք ռայոնների խորհրդայնացումը և  
 կարմիր բանակի քաղաքական ապարատի դերը:  
 ը) Քաղաքական աշխատանքը լեհական, ոռոմի-  
 նական և անգլիական զորքերում և այլն:  
 ա) Բանակը հոկտեմբերից հետո և  
 ՌԱԶՄԱ-ՊԱՏ-  
 ՄԱԿԱՆ ԴԱ-  
 ՐԱՆՈՍՈՒ-  
 ԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ՑԻԿԼ  
 բ) Անուանուայի ռազմական ինսեր-  
 պինցիան և պայքար Չեխո-սլովակիների,  
 յապոնացիների, անգլիացիների, ֆրանսիացիների դեմ:  
 ց) Պայքար կոչակի դեմ:  
 ե) Պայքար Դենիկինի դեմ:

յե) Պայքար Պետրովգրադի համար:

զ) Պայքար սպիտակլեների դեմ:

ե) Պայքար Վրանցիլի դեմ: Պայքար բանդիտագմի դեմ Ռւէրայինայում, Թուրքեստանում, Հեռավոր Արևելքում, Վրաստանում, Կարիլիայում:

Նույն այդ ցիկլի մեջ կորելի յե մացնել մի շարք թեմաների մակերախիտական պատերազմի զործառնությունների վերլուծման մասին, ինչպես Արևմայան, նույնպես և Արևելյան ճակատներում, միաժամանակ բացատքելով ուղմական գործողությունների բնույթի տարբերությունը համաշխարհային և քաղաքացիական պատերազմների պայմաններում:

ԴԱՍԱԿԱՐԱՆ  
ԳՈՅԻՆԱԾԵՐԻ ուղմածովային ուժերը:

ՑԻԿԼ ՇԱՀԱՐՄԱՆ  
ԳՈՅԻՆԱԾԵՐԻ վորագյուղացիական յերիտարգությունը:

գ) Ռազմական գործողությունների Բալթիկ-ծովան ուղմաբեմը:

դ) Ռազմական գործողությունների Սև-Ծովան ուղմաբեմը:

յե) Ժամանակից ռազմանալերի տեսակները:

ԴԱՍԱԿԱՐԱՆ  
ԹՅՈՒՆԱԾԵՐԻ արի Միջամասականության:

ՑԻԿԼ ՑՆԴԱՅԱՆ  
ՆԱԽԻՐ-ՔԱՂԱ- Խնդիրները և Ոսուավիագիմը:

ՑՈՒԿԱՆ  
ՄԱՆԵՐՈՎ և Ոսուավիագիմը խնդիրները:

դ) Մեր հավանական թշնամիների սպառագինման դրությունը:

յե) Յերկի ինգուստարացումը և ԽՍՀ Միության ինքնապաշտպանությունը:

զ) Կոմինատերնի VI համագումարը պատերազմի վտանգի մասին:

ե) Ժամանակակից բուրժուական պացիֆիզմը և սոցիալ-դեմոկրատիան:

ը) Կելլոգի պակտը պատերազմի ռազելման մասին և ընդհանուր զինաթափի մեր նախադիմը:

թ) Կապ. յերկրների անտ. ճգնաժամը:

Մենք զիտակցորեն տալիս ենք ռազմական դասախոսությունների և զրույցների թեմաների պլանը, վորպեսզի դրանով հնարավորություն տանք սեղական աշխատավորներին համոզվելու, թե ինչ ահազին, բազմազան, ընդարձակ և բարդ թեմաներ կան ռազմական պրոպագանդի համար բնակչության մեջ, մանավանդ վոր մենք հաճախ զանգատներ ենք լսում աեղական աշխատավորներից, թե նրանք դժվարանում են հետաքրքրական և հատուկ թեմաներ ընտրելու գործում, վոր չեն կարողանում դուրս գալ «միջազգային դրության, սպատերազմի վտանգի և աշխատավորներին ուղմականացնելու խնդիրների մասին» — թեմաների շրջանակից:

Համեմականակի յե ինքնին, վոր մեր թված թեմաներից շատերը կարող են կարգացվել և զրվել միմիայն բարձրորակ լեկարքներ ունենալու դեպքում: Այդ նպատակով Ոսուավիագիմի Յերկրային և Շրջանային խորհրդներին կից պետք ե կազմակերպվեն դասախոսների համապատասխան խմբեր, ուր պետք ե դիմել զեկուցողների սպահանջով:

Մի շարք զեկուցումներ և զրույցներ ավելի թեթև թեմաներով, մանավանդ ընդհանուր-ուղմական և ընդհանուր-քաղաքական բնույթը կրող, կարող են

զլուի բերվել գործարաններում տեղական ուժերով:

Կանգ չառնելով ակմբային մասսայական գեղարվեստական—թատրոնական աշխատանքի (ներկայացումներ, համերգներ, բեմադրություններ, կենդանի լրագրներ, կինոյերեկոներ և այլն) վրա, քանի վոր գեղարվեստական աշխատանքի հարցերը բավականաչափ լուսաբանված են մեր ընդհանուր քաղաքական գրականության մեջ, — մենք գրք ույշիս վերջում կանգ կառնենք Ոսո-ավիաքիմի անկյունի դերի վրա, վորը մի չափազանց կարեոր ողակ ե հանդիսանում Ոսոավիաքիմիական լուսավորության ընդհանուր սիստեմի մեջ։

## V. ՈՍՈ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱՆԿՅՈՒՆԸ

Ոսո-ավիաքիմի անկյունի տեղն ու դերը ուազմական լուսավորության ընդհանուր սիստեմի մեջ այսպես ե պարզաբանված Ոսո-ավիաքիմի բջիջի քարտուղարի տեղեկատվի եջերում։

«Ոսո-ավիաքիմի անկյունը, վորպես Ընկերության գաղափարների պրոպագանդի լավագույն ձևերից մեկը, վորպես վայր, վորտեղ աշխատավորները առաջին անգամ ծանոթանում են Ընկերության նպատակներին և խնդիրներին, վորտեղ կենտրոնացած ե ուսումնական-ցուցադրական նյութի մեծագույն մասը՝ Ոսո-ավիաքիմի գանազան խմբակցությունների պարապմունքների համար, վորտեղ գործնականորեն հայտնաբերվում են Ընկերության բջիջի նովաճումները, — հանդիսանում ե այն ամենաանհրաժեշտ գործնական կազմակերպությունը, վորը ոգնում ե Ոսո-ավիաքիմի ստորին բջիջի գործնեյության զարգացմանը։ Հենց այստեղ, անկյունում, պետք ե կենտրոնանա բջիջի

ամենորյա յեռուն աշխատանքը, վորը պետք ե նետաքրքրություն առաջացնե դեպի Ընկերությունը՝ աշխատավորների կողմից։ Անկյունում ավելի, քան մի ուրիշ տեղ, պետք ե տեղի ունենան նոր անդամների հավաքը, նրանց սկզբնական մշակությունը, ոգնություն հասցվի նրանց՝ խմբական աշխատանքի մեջ, հայտնաբերվի ակտիվը, վորը կարողանա զարգացնել տվյալ անկյունում անմիջական կազմակերպչական աշխատանք։ Անկյունը այն ոժանդակ կազմակերպությունն ե ամբողջ աշխատանքի մեջ, վորի շուրջը կենարունանում ե բջիջի ամբողջ գործնական աշխատանքը։ Նկատի առնելով անկյունի ամբողջ կարեռությունը բջիջի աշխատանքի ծավալման գործում, վերջինս ամեն հնար պետք ե գործ դնի, վորպեսզի անկյունը, վորպես հաջող աշխատանքի գրավական, ստեղծվի։

Անկյունը պետք ե կազմակերպել ՎՈՐՏԵՂ ՊԵՏՔ Ե ԿԱԶ- այստեղ, վորտեղ ամենից շատ են խըռ- ԱՎԱԿԵՐՊԵԼ նվում աշխատավորները ակումբներում, ԱՆԿՅՈՒՆԸ խրճիթ-ընթերցարաններում, հանրա- կայարաններում, զորանոցներում, դպրոցներում և այլն։ Անհրաժեշտ ե գործ դնել ամեն ջանք, վոր- պեսզի ձեռնարկությունները, հաստատությունները, ուսումնական հիմնարկությունները, գյուղական խոր- հուրդները հնարավորություն տան բջիջներին՝ կազ- մակերպելու իրենց անկյունները այդ տեղերում։ Անկյունի տեղից խիստ մեծ չափով կախված ե նրա բեղմնավոր աշխատանքի հաջողությունը։

Անկյունը Ոսո-ավիաքիմի բջիջի կազ- մակերպությունն ե. Բջիջը պարտավոր է ստեղծել այդ, ղեկավարել և ուղղություն տալ նրա աշխատանքին, լրա-

ցնել, թարմացնել նրան, աշխատանքի հաշվառություն  
կատարել և ալլու:

Բջիջը, բնականաբար, իր ամբողջ կազմով չի կա-  
րող դեկավարել անկյունը: Նա ընտրում է իր շարքե-  
րից Ընկերության աշխատանքներին ծանոթ ամենից  
յետանկուն անդամին, վորպես անկյունի վարիչ: Յան-  
կալի յե, վոր այդ ընտրությունը կատարվի բջիջի  
ընդհանուր ժողովում՝ բջիջի բյուրոյի առաջարկու-  
թյամբ, վորովինեամ դրանով զգալի չափով կրաքարանա  
այն ընկերոջ բարսյական պատասխանատվությունը,  
վորին վստահում են այդչափ կարեոր մի աշխա-  
տանք: Ամենից լավն ե նշանակել անկյունի վարիչ  
բջիջի անդամներից մեկին, վորը դառնվում ե հրամ-  
կազմի պահեստի մեջ, կոմ լավ պատրաստված և  
Ընկերության գործերով հետաքրքրվող մի նախկին  
կարմիր բանակայինի: Յեթե վորեւ պատճառով հնար  
չի լինի անկյունի վարիչ նշանակել ուղմական գոր-  
ծին ծանոթ մարդու, այն ժամանակ պետք ե ընտրել  
Ընկերության բջիջի ակտիվ անդամին: Յանկալի չե  
հաճախակի փոփոխել վարիչներին: Բջիջը չպետք ե  
ինքնազդուխ թողնե վարիչին: Նրա անմիջական պար-  
տականությունն ե տալ առաջադրություններ և ցուց-  
մունքներ վարիչին, ողնել և հսկել արված առաջա-  
դրությունների իրազործմանը, դիտելով և ստուգելով  
աշխատանքը, պարբերական հաշվառվություն դնելով  
բյուրոյի և բջիջի ընդհանուր ժողովի առաջ: Ըստ հնա-  
րավորությունները պարտավոր են հրամիրել ան-  
կյունների վարիչների խորհրդակցություններ՝ նրանց  
հրահանգելու նպատակով (որինակ՝ համառայոնական

կամպանիաներ տանելու համար և այլն): Անկյունի  
աշխատանքի դեկավարության գործում ամենից առաջ  
ուշադրության պետք ե առնել, 1) անկյունի ամբողջ  
գործնեյության կապը Ընկերության բջիջի մնացած  
աշխատանքի հետ, 2) կուլտուսավորական կազմակեր-  
պությունների հետ (քաղլուսմար բաժինների, ակումբ-  
ների, խրճիթ-ընթերցարանների և այլն), 3) անկյունի  
ակտիվի դեկավարությունը, 4) վարիչի վորակավոր-  
ման մշտական բարձրացումը: Պետք ե հիշել, վոր  
ակտիվի աշխատանքում, հասարակական ինքնազործ-  
նեյության կազմակերպության մեջ հրամայելու  
սիստեմը անթույլատրելի յե: Անձնական որի-  
նակը, ցուցմունքը, աշխատանքի նոր ձեերի և մեթոդ-  
ների կոլեկտիվ վորոնումը, բարոյական իրախու-  
սանքը, — անա այն տվյալները վորոնք միասին ան-  
կյունին կտան հեղինակությունները չափազանց կա-  
րենոր և աշխատանքի հաջող ծավալման համար: Բնա-  
կան ե, վոր վարիչին հարկավոր են աշխատանքի մեջ  
առանձին մարդիկ, վորոնք ծանօթ լինեն այս կամ այն  
մասնագիտական հարցին: Նա պետք ն կապ հաստատե-  
և զրավե աշխատանքի գյուղատնտեսներին, բժիշկնե-  
րին, դպրոցական աշխատավորներին, պահեստի հրամ-  
կազմին, ամուր կապ հաստատե ուզմական կոմիսա-  
րիատի հետ և այլն: Այդ բոլոր անձերը և հաստատու-  
թյունները կարող են ոգնել վոչ միայն խորհրդով  
(կոնսուլտացիա), այլ և ժամանակավորապես ոգտվելու  
համար կարող են տալ զանազան ձեռնարկներ և ան-  
ձամբ մասնակցել անկյունի աշխատանքին:

Անկյունը կազմակերպելիս հարկա-  
իւղղութեան կազմությունը վոր և ոգտագործել Ոսո-ամիսի հա-  
մարկարգնել ընան բջիջների վորձը — այցելել ար-  
շահուսները դեն գոյություն ունեցող անկյունները,  
անցնել զրամաները, վորաեղ կան կենինյան անկյունները,  
զրուցել այդ անկյունների վարիչների հետ, այլ

և խորհրդակցել արձակուրդում գտնվող կարմիր բանակայինների հետ. առանց ընդմիջելու սկսած գործը, բանակցություններ սկսել շեֆություն անող զորամասի, Ասո-ավիաքիմի ավելի վերադաս միավորության հետ, Ընկերության ռայոնական խորհրդից հրահանգիչ պահանջել կամ անցնել անձամբ ռայոնական խորհուրդը և ստանալ համալսատափանց ցուցմունքներ, — այդ բոլորը հարկավոր ե կատարել՝ խուսափելու համար տնավարի աշխատելուց և ժամանակը իզուր վատնելուց՝ անպետք անկյուն կազմակերպելու համար։ Զափազանց ցանկալի յե ռայոնի կամ գավառի ընդհանուր ջանքերով ստեղծել Ասո-ավիաքիմի մի կամ մի քանի որինակելի անկյուններ, տիպային բնույթով. այդ դեպքում ստորին բջիջներում նոր անկյուններ կազմակերպելու խնդիրը զգալի չտփով կթեթևանա։ Անկյունի բովանդակությունը և կազմակերպությունը պետք ե համալսատափանց այն մասսայի զարգացման ոլանճներին և շահերին, վորին անկյունը մտադիր ե սպասարկել։ Այստեղից պարզ ե, վոր գյուղացիների համար Ասո-ավիաքիմի անկյունը պետք ե ունենա գյուղատնտեսական բնույթ՝ — պրոպագանդ մղե հանքային պարարտանյութերի համար, պայքարե մասսատուների դեմ և այլն։ Քիմիական արդյունաբերության բանվորների համար պետք ե ընտրվեն համապատասխան նյութեր քիմիական պրոպագանդի գծով։ Տրանսպորտի բանվորների համար անկյունը պետք ե տա նյութեր յերկաթուղիները պաշտպանելու մասին և այլն, և այլն։

Սակայն անկյունների կազմակերպության բնույթի հատուկ թեքումների և ձևափոխությունների դեպքում

ևս բոլոր ստեղծվող անկյունները իրենց բովանդակության մեջ պետք ե ունենան այն ընդհանուր գծերը, վորոնք պետք ե անդրադանեն Ոսո-ավիաքիմի աշխատանքի հիմնական ուղղությունները։ 1) Յերկրի ինքնապաշտպանության և Ընկերության ամեն մի անդամի նախապատրաստության խնդիրը՝ սոցիալիստական պետության պաշտպանի պատասխանառու դերը կատարելու համար. 2) Ավիացիան և քիմիան ուղղմական պայմաններում և խաղաղ շինարարության մեջ կիրառելու խնդիրները։ Դրա համար ել անկյունում տեղ պետք ե հատկացվի հրածգության գործին և սպորտին, աշխատավորների զինվորական նախապատրաստման տարրերին, գազային վտանգի և ոդային հարձակման դեմ կովելու միջոցներին ծանօթանալուն։

Անկյունը սարքավորելիս, մանավանդ գյուղական բջիջը, անմիջապես բախվում ե մեծ դժվարությունների հետ նյութերի վերաբերմամբ։ Անհրաժեշտ ե վորքան կարելի յե լայնորեն դնել նյութերի մի մասը սեփական ուժերով պատրաստելու հարցը։ Այնպիսի առարկաներ, ինչպես զանազան մողելներն են, ավագով լի արկդը, դիագրամները լողունգները և այլն, ամբողջովին կարելի յե պատրաստել հենց տեղն ու տեղը։ Բջիջի ուժերով անկյունի համար ինքնուրույնորեն պատրաստած նյութերը անպայման ողուտ կբերեն Ընկերության բջիջին՝ նրա անդամների գործնական ուսուցման գործում և կստիպեն ավելի մեծ հարգանքով և ուշադրությամբ վերաբերելու իրենց ձեռքով ստեղծած անկյուննին։

Ասո-ավիաքիմի անկյունների աշխատանքության տանքը պետք ե լինի ըստ հասարակության թյան բազմատեսակ վոչ միայն իր բունդակությամբ, այլ և իր մեթոդներով։ Աշխատանքի մեթոդները պետք ե կիրառել այն հաշ-

վով, վոր անկյունը հաճախելը կատարվի վոչ թե բարյական ճնշման տակ և համարվի հաճախորդների կողմից վորպես կուլտուրավորական պարտականություն, այլ ամբողջությամբ արտահայտի հաճախորդների շահագրգուված լինելը։ Լրագրների, ժուռանալների, զրքերից կամ գրքույկներից հետաքրքրից հոգվածների բարձրածայն ընթերցում համապատասխան հարցերի, մասին, մատչելի զրույցներ ուսուցման-ավիաքիմիական հետաքրքրող հարցերի մասին, սեղանի և շարժական խաղեր և բեմադրություններ. տեղակատուաշխատանք անձնական դիմումի միջոցով անկյունի աշատավորներին, և հարց ու պատասխանների գրքի ողնությամբ, գործնական ծանոթություն զանազան տեղակ գենքերի և, յեթենարավոր ե, նրանց գործողության հետ, ինչպես նաև սալառնակների մաղելների, գաղապատանների և հակագաղերի հետ, եկուրուրափառ նախապատրաստելու և գլուխ բերելու կազմակերպչական աշխատանք դեպի ուսուցման—ավիաքիմ թանգարանները, Կարմիր բանակի զորամասերը, զյուղատն տեսական փորձնական - ցուցադրական հողամասերը, վորտեղ կատարվում ե համարային պարարտացումն և այլն, դասախոսություններ պատկերներով, ցուցահանդեսների կազմակերպություն «Պաշտպանության որը» (փետրվարի 23-ին), «Ավիացիայի որը» (հուլիսի 14-ին), վորտեղ անպատճառ հարկավոր ե ոգտագործել Ընկերության բջիջների գործնական կազմակերությունների աշխատանքների արդյունքը, կազմել լրագրական տեղեկություններից և ժուռանալների պատկերներից ընդհանուր տեսություններ, անկյունի գործնեյության լուսաբանությունը պատի լրագրի մեջ, — այս բոլոր

մեթոդները ուշագրություն կդրավեն դեպի անկյունը և կոգնեն նրա աշխատանքի ծավալմանը։ Ավելի վատ բան չկա, քան այն, յերբ անկյունի աշխատանքը պատահական բնույթ ե կրում։ Անհրաժեշտ ե աշխատանքի պլանավորում, վորը պետք ե հաշվի առնե անկյունը հաճախորդների շահերը։ Պետք ե կազմել անկյունի զբաղմունքների յերկու շաբաթվա կամ մի ամսվա ծրագիր։ Ծրագիրը կազմելիս կենցաղային մոմենտների հաշվառությունը անպայման պարտադիր ե ինչպես ըստ բովանդակության, նույնպես և ըստ զբաղմունքների ժամանակի։ Ծրագիրը նախորոք պետք ե համաձայնեցրած լինի Ընկերության բջիջի և անկյունի հետ կապ ունեցող կուլտուրավորական կազմակերպությունների այլատեսակ աշխատանքների հետ. — պետք ե քննի անկյունի ակտիվի կողմից և հաստատի Ասուավիաքիմի բջիջի կողմից։ Ծրագիրը մաքուր գըրված ու կախված պետք ե լինի աչքի դարնվող տեղում։ Ծրագրի մեջ ժամանակագրական կարգով պետք ե նշվեն. 1) պարապմունքների ամսաթիվը, որը և ժամերը, 2) աշխատանքի բովանդակությունը, 3) դեկավարի ազգանունը, յեթե հսարավոր ե, նաև դասախոսի ազգը և այլն։

Այս գեպքում, յերբ զրույցի ղեկավարը կամ դասխոսը բաց կթողնեն իրենց զբաղմունքի ժամը, պետք ե փոխարինել այդ զրույցը մի ուրիշով, վորովնետեւ բոլորովին անթույլարելի յե, վոր ընկերության անդամները գան անկյունը և ժամավաճառ լինեն. Դա նրանց կսովորեցնի անկյունը կանոնավորապես հաճախելուց հրաժարվել:

Զավիազանց կարեոր ե անկյունի աշխատանքի հաշվառությունը, ինչպես կատարած աշխատանքի և այդ աշ-

Խատանքի մեջ մտածների քանակության, նույնպես և  
նրա վորակի կողմից։ Աշխատանքի հաշվառությունը  
հնարավորություն կտա ընտրելու ավելի կենսական ձե-  
վեր ու մեթոդներ և հաշվի առած փորձը դարձնելու  
Ոսուավիաքիմի մյուս անկյունների սեփականություն։

## VI. ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐ

Ոսուավիաքիմի բջիջի եյական մասերից մեկը սիտի  
հանդիսանա պատի լրագրը։ Պատի լրագրի պարտա-  
կանությունն ե պատկերացնել տվյալ ձեռնարկության  
կամ հիմնարկության ու ազմական աշխատանքի կարևո-  
րագույն ետապները։ Պատի լրագրը կամ ընդհանուր  
լրագրի ու ազմական բաժինը շարունակ պետք ե  
ստեղծեն հասարակական կարճիք աշխատավոր-  
ների ու ազմական նախագատրաստության հարցերի  
շուրջը։

Պետք ե նկատել, վոր դժբախտաբար տշխատանքի  
այդ ձեռ ևս զարգացած չե։ Մի ամբողջ շարք  
ձեռնարկություններում մինչև այժմ առ-  
հասարակ ու ազմական պատի լրագրները  
չկան, իսկ ընդհանուր պատի լրագրները  
հաճախ վոչ մի ուշադրություն չեն դարձ-  
նում ու ազմական պրոպագանդի վրա։

Պատի լրագրի ու ազմական բաժինների բովանդա-  
կությունը պետք ե կազմվի հետեւյալ հարցերի պար-  
զաբանությունից։ 1) Յերկրի ինքնապաշտպանության  
բարձրացման ընդհանուր հարցեր, 2) ու ազմական  
տեխնիկայի հարցեր, 3) ու ազմական աշխատանքի ընդ-  
հանուր խնդիրներ քաղաքացիական բնակչության

մեջ (հրաձգության սպրոտ, ուսումական անկյուններ,  
ուսումական գիտելիքների խմբեր և այլն), 4) ընթա-  
ցիկ ուսումական կամպանիաներ, վոր վարում են կու-  
սակցությունը, Խորհրդային իշխանությունը և հասա-  
րակական կազմակերպությունները (զինակոչ, զին-  
վորների արձակուրդ, տեղական զորահավաք, ինքնա-  
պաշտպանության դեկադ, Կարմիր բանակի տարե-  
դարձ), 5) Կարմիր բանակի և առանձին ընդշնչացյա-  
գորամասերի կյանքը, ուսուցումն ու կենցաղը, 6) Յերկրային զորքերի փոփոխական կազմի աշխատանքը  
զինակոչի ընդմիջումներում, 7) Կարմիր բանակի, բան-  
վորների և զյուղացիների միջի կապը։

Պատի լրագրների կամ նրան ու ազմական բաժին-  
ների հրատարակությունը ամենից նպատակահարմարն  
ե հարմարեցնել կարմիր որացույցի վորոշ թվերին,  
որինակ՝ մարտի 18-ին — Պարիզի կոմունայի և Մոպրի  
որը պետք ե ոգտագործել բացատրելու համար զորքի  
գերը սլրուետարիատի դիկտատուրայի ամրացման  
գործում։ Մայիսի 5-ին՝ մամուլի որը — հայտարարելու  
համար ու ազմաթղթակցական շարժման դերը և նրա  
աճը, բանակային մամուլի դերը Խորհրդային Միու-  
թյան զինված ուժերի և ինքնապաշտպանության շի-  
նարարության մեջ։ Ոգոստոսի 1-ը՝ իմպերիալիստա-  
կան պատերազմի տարեդարձը — զբուվորելու համար  
պատերազմի սպառնալիքը՝ վորպես հետևանք սպառ-  
պինումների։ Նոյեմբերի 7-ը՝ Հոկտեմբերյան հեղա-  
փոխության տարեդարձը — բացահայտելու համար  
կարմիր բանակի դերը Հոկտեմբերի նվաճումների  
պաշտպանության և սոցիալիստական շինարարության  
գործում։ Լենինյան որերը — բացատրելու համար կե-

նինի գերը և. Ս. Հ. Միության զինված ուժերի կտրմակերպության մեջ, Փետրվարի 23-ը՝ ինքնակալության տապաշման որը — պարզելու համար կարմիր բանակի գերը Հոկտեմբերյան նվաճումների պաշտպանության գործում, վորպես նրա աշխատանքի գումարը քաղաքացիական պատերազմի շրջանում և խաղաղ ժամանակ, ծանոթացնելու աշխատավորներին կարմիր բանակի ժամանակակից շինարարության հիմքերին, նրա նվաճումներին և թերություններին, լայնորեն դնելու և ՍՀ Միության ինքնապաշտպանության հարցերը տալու ինքնապաշտպանության ամրացման աշխատանքի գումարը, մանականդ աշխատակոր ընակչության ուղմականացման գործում:

Ինքնապաշտպանության դեկադան իր հերթին ոգտագործվում ե լուսաբանելու համար ուղմական արդյունքներն ու հեռանկարները տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ՝ Ոսուավիաքիմի նոր անդամներ գրավելու, նոր խմբեր և անկյուններ կազմելովելու համար և այլն:

Բացի այդ, կարող են ոգտագործվել առանձին տարեդարձներ, վորոնք ունեն տեղական նշանակություն և կալ ունեն տվյալ ույյոնի պատմության հետ, որինակ, և նինգրազի պաշտպանությունը, Արխանգելսկի պատության տարեդարձը, Կրոնշտադտի ապստամբությունը և այլն:

Հասկանալի յե ինքնիստինքյան, վոր լրագրի հատուկ համար պետք ե նվիրել զորակոչի հարցերին — ուղմական ուսուցման ցանցի ծավալման և լրացման հարցերին: Պատի լրագրներ հիմնելու խմբագրական

մարմինը առանձին ուշադրություն պետք ե դարձնի ինքնազննապատության հարցերին, մերկացնելով ուղմականացման աշխատանքի և տվյալ ձեռնարկության ու հիմնարկության աշխատավորների նախապատրաստման գործի բոլոր սխալներն ու թերությունները: Պատի լրագրի ուղմական բաժնի վարիչ պետք ե նշանակել Ոսուավիաքիմի բջիջի ներկայացուցչին և կամ պահեստի հրամկադմից:

## VII. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՈՐԱՑՐԱԾ ՁԵՎԵՐ

Ինչպես արդեն ասացինք, խմբական աշխատանքը հանդիսանում ե շատ դեպքերում մասսայական աշխատանքի ձևերից մեկը: Վորքան լավ և լայն ե ծավալված ձեռնարկության կամ հիմնարկության մեջ մասսայական ուսուցման աշխատանքը, այնքան ավելի լավ և հեշտությամբ ե կազմվում և ծավալվում նաև ուղմական ուսուցման ցանցը, խմբական խորացրած աշխատանքը:

Խմբական աշխատանքը ներկա միջազգային լարգած պայմաններում տարեցտարի սկսում ե ձեռք բերել ավելի և ավելի կարեռ և պատասխանատու գեր, վորպես մեկը բանվորների և զյուղացիների ուղմական նախապատրաստության գործուներից, այն զյուղացիների և բանվորների, վորոնք կարմիր բանակի ապագայի պահեստ են:

Ներկայումս, այսքան տարիների փորձի հիման վրա մշակվել ե վորոշ սխատեմ աշխատավորների խմբականուղմական նախապատրաստման, վորը տարվում ե Ոսուավիաքիմի միջոցով:

ՌԱԶՄԱԿԱՆ  
ԳԻՏԵԼՎԱՔՆԵՐԻ  
I ԱՍՏԻՃԱՆԻ  
ԽՄԲԵՐ  
ՔԻՄԱՀԱՆ  
ԽՄԲԵՐԻ հիմնական տիպը վոր  
մասսայական ծավալ և զարգա-  
ցումն եւ ստացել, հանդիսանում  
եւ Ոսուավերքիմի ռազմական  
գիտելվքների I աստիճանի խումբը: Այդ  
խմբի նպատակն եւ:

1) Բացատրել մարտիկ-քաղաքացու պարտակա-  
նությունը դասակարգային պատերազմի պայմաննե-  
րում, այլ և զարթեցնել ձգտումն նրա մեջ՝ կատարելու  
այդ պարտականությունները:

2) Բացատրել ապագա պատերազմների անխուսա-  
փելի լինելը, նրանց ռազմատեխնիկական բնույթը,  
դասակարգային ելությունը եւ

3) տալ սկզբնական գաղափար բաժնյակի մեջ  
դանվող միայնակ մարտիկի գործողությունների մասին:

ՅԵԼՆԵԼՈՎ ծրագրի վերը հիշած նպատակից I աստի-  
ճանի խումբը ձգտում եւ տալ ունկընդիրներին այնչափ  
գիտելվքներ, վորոնք մի կողմից կարողանան ընդգր-  
կել ժամանակակից կովին հատուկ՝ գործ-  
նական հանգամանքների տարրերը և այդ  
կովին գիտակցորեն մասնակցելու հա-  
մար անհրաժեշտ ռազմական-տեխնիկական  
ունակությունները, մյուս կողմից՝ ծրա-  
գրի առանցքային հարցն եւ հանդիսանում  
հրաձգության տակարկական նախապատ-  
րաստությունը, վորի շուրջը կենտրոնանում են  
մնացած հարցերը: Դրանով արմատանում եւ  
դրի գիտակցության մեջ ժամանակակից կովի համար  
հմուտ հրաձգության գերազանց կարենացը, կարենությունը,

վորը պետք եւ համաձայնեցվի մարտիկի գործողու-  
թյունների հետ, միաժամանակ հաջվի առնելով ժա-  
մանակակից կովի տեխնիկական պայմանները: Ծրա-  
գրի ուսուցման պլանը 15 պարապմունքներով եւ վո-  
րոշված, վորը պիտի տեսի  $\frac{7}{2}$  ամիս: Ուսուցման պլա-  
նում ընդհանուր տեղեկություններին հատկացված եւ  
մի զբաղմունք, հրաձգության նախապատրաստու-  
թյանը՝ 11 պարապմունք, ռազմա-քիմիական գործիքն՝ 2  
պարապմունք, շարքային նախապատրաստությանը՝ մի  
պարապմունք, տակտիկական նախապատրաստու-  
թյանը՝ 11 պարապմունք, բացի այդ, ղեկավարի տրա-  
մադրության տակ մնում եւ պահեստի չորս պարապ-  
մունք: Ռազմական գիտելվքների առաջին ասականի  
խմբում պիտի սովորեն այն բոլոր աշխատավորները,  
վորոնք ռազմական վոչ մի պատրաստու-  
թյունն չունեն:

Այնուհետև գալիս եւ Ոսուավիաքիմի  
ՌԱԶՄԱԿԱՆ ռազմական գիտելվքների II աստիճանի  
ԳԻՏԵԼՎԹՅՈՒՆԵՐԻ խումբը: Այդ խմբի ծրագրը նկատի  
II ԱՍՏԻՃԱՆԻ ունի նրանց, վորոնք արդեն անցել են  
և ՈՒՄԲԵՐ ունի նրանց, վորոնք արդեն անցել են  
ռազմական գիտելվքների I աստիճանի  
խմբի ծրագրը:

Ռազմական գիտելվքների II աստիճանի խումբը  
հետեւյալ խնդիրներն ունի իր առաջ:

1) Թարմացնել ունկընդիրների գիտակցության  
մեջ այն բոլորը, ինչ վոր նրանք անցել են I աստի-  
ճանի խմբերում:

2) Ըստարձակել և ամրացնել այդ բոլորը մինչև  
բաժնյակի նախապատրաստման սահմանները, յերբ  
այդ բաժնյակը պիտի գործեն դասակի կազմի մեջ:

3) Ծանոթացնել ունկը նղիրներին ռազմական տեխ-  
նիկայի նորագույն նվաճումներին:

Յելնելով հիշած խնդիրներից, ծրագիրը դարձյալ  
շեշտը դնում է տակտիկական և հրածգու-  
թյան նախապատրաստման վրա, ավելա-  
ցնելով դրանց վրա ընդհանուր տեղեկու-  
թյուններ կովի տեխնիկական միջոցները  
ուսումնասիրելու և տեղագրության վերա-  
բերմամբ:

Խմբի ուսուցման պլանը նույնպես 15 պարապ-  
մունքից ե կազմված, վոր տեսմ և  $\gamma^{1/2}$  ամիս և ունի  
հետեւյալ գծադրիրը. ընդհանուր տեղեկություններին  
նվիրվում ե մի պարապմունք, կովի տեխնիկական  
միջոցների հարցերին ծանոթանալուն՝ մի պարապ-  
մունք, տեղագրությանը՝ մի պարապմունք, տակտիկա-  
կան նախապատրաստությանը՝ 5 պարապմունք, հրա-  
ծգության նախապատրաստությանը՝ 5 պարապմունք  
և պահեստի՝ 2 պարապմունք:

ՀՐԱԶԳՈՒ-  
ԹՅԱՆ ԽՈՐԵՐ հրածիգ խումբը:

I աստիճանի հրածիգ խումբը նպա-  
տակ ունի համաձայն «հրածգություն սպորտի միջո-  
ցով դեպի ռազմական նախապատրաստությունը» լո-  
գունգի՝ ստեղծել գիտակից հրածիգ, վորը ճանաչե իր  
գենքը, կարողանա ոգտվել նրանից, կրակելով հրա-  
ցանից ամեն տեսակ գրության մեջ:

Հրածգության II աստիճանի խումբը նպատակ ունի I  
աստիճանի խմբում ստացած գիտելիքների ու վար-  
ժությունների հիման վրա նախապատրաստել այնպիսի  
հրածիգ, վորը կարողանա գիտակցորեն ոգտվել իր

գենքից և դուսի հանե կովի դանագանակերպ պայ-  
մաններում տակտիկական հարցերից:

Ուսուցման պրոցեսում պետք ե ընտրել ամենա-  
ընդունակներին, տանել նրանց ույոնական հրածիգ  
զորամասերը՝ ավելի ևս կատարելագործվելու—տակտի-  
կական և հրածգության տեսակետներից:

Յելնելով խմբի հիմնական նպատակից, ծրագիրը  
ծանրանում ե հրածգության նախապատրաստ-  
ման վրա և վերցնում ե իր վրա նաև տակտիկական  
նախապատրաստությունը, վորը նպաստում  
ե առաջնին, ըստ վորում տակտիկական նախապատ-  
րաստությունը պետք ե վարել հրածգային ուժեղ թե-  
քումով:

Այսուհետև գալիս են առանձին ռազ-  
մական մասնագիությունների խմբերը,  
վորոնցից անվանենք հետեւյալները. գըն-  
դացիրային խումբ (30 պարապմունքով), վորի ուսու-  
ցումը հանդիսանում ե ռազմական գիտելիքների I  
աստիճանի խմբի վերնաշենքը և իրեն նպատակ ե  
գնում ընդարձակել և խորացնել այն գիտություն-  
ները, վորոնք ստացել են I աստիճանի խմբում, տա-  
լով այդ գիտություններին հատուկ գնդացիրային  
թեքումն:

Բացի այդ, խումբը նպատակ ունի հնարավո-  
րության սահմաններում ուսումնասի-  
բելու անիվակոր գնդացիրը, վորպես ռազ-  
մական մեջենա և սովորեցնելու նրան տիրելու  
տեխնիկական միջոցները:

Կերպարես, խմբի նպատակն ե ծանոթացնել ուն-  
կընդիրներին գնդացիրից կովում ոգավե-

Ե՞ւ կանոններին, վորովհետեւ գնդացիքը  
հետեւ կորքի խիստ ուժեղ զենքն է:

ՀՐԵՑԱՆԱ-  
ԽՈՒՄԲ Ոսուավիաքիմի հրետանու խումբը,  
ՎՈՐՔԻ ՎՈՐՔԻ ծրագիրը կազմված է 30 պարապ-  
մունքից և վորի նպատակն է ծանոթա-  
ցնել ունկընդիրներին.

1) Ժամանակակից կովի պայմաններում հրետա-  
նին ճանաչելու հարցերին.

2) Դաշտային թեթև թնդանոթի նյութական մասին։  
3) Թնդանոթի ռազմական հրաձգության։

ԿՈ.ՊԻ ԽՈՒՄԲԸ Սյդ խումբը հիմնված է գլխավո-  
րապես այն դպրոցական, տեխնիկում-  
ների, ձեռնարկությունների բջիջների վրա, վորոնք  
կապ ունեն ելեկտրոտեխնիկայի հետ, Խմբի  
նպատակներն են։

1) Հետաքրքրություն առաջնել ելեկտրոտեխնի-  
կական պարապմունքների վերաբերմաբ, հետեւ կ  
տեխնիկական կապերի հարցերի շուրջը։

2) Ոգտելով ելեկտրոտեխնիկայից, վորապես մի  
միջոցից, վորը ծագեցնում է հետաքրքրություն առ-  
հասարակ դեպի ռազմական զբաղմունքները և դեպի  
կապի ծառայությունը մասնավորապես, տալ հատուկ  
փոտելիքների մաքսիմումը, վորոնք անհրաժեշտ են  
կապի ռազիոնալառաջողների և II կարգի տեղիքոնիստ-  
ների համար։

Ծրագիրը բաղկացած է 15 պարապմունքից։

ՈԴԱ-ՔԻ-  
ՄԻԱԿԱՆ Այնուհետև գալիս ե ողաքիմիա-  
ՊԱՇՊԱՆՈՒ-  
ԽՈՒՄԲ կան ինքնապաշտպանության խումբը,  
ՎՈՐՔԻ ՎՈՐՔԻ վորի նպատակն է.

1) Ծանոթացնել ունկընդիրներին  
ողաքիմիական հարձակումների բնույ-  
թին և պաշտպանության միջոցներին, վորտեղ մտնում

ե պաշտպանության անձնական միջոցներից ոգտվելու  
ուսուցումը։

2) Նախապատրաստել տվյալ ֆաքտիկում, գործա-  
րանում կամ ակումբում գրագետ մարդկանց, վորոնք  
ոգնեն գործարանի ողաքիմիական պաշտպանությանը։

Ամբողջ ծրագիրը կազմված է 40 ժամվա համար,  
վորի կեսը տեսական աշխատանքների համար ե, իսկ  
մյուս կեսը՝ գործնական աշխատանքների համար։  
Ողաքիմիական ինքնապաշտպանության խմբերում  
սովորած ունկընդիրները հետագայում կազմում  
են ավելացիմիական զորամասեր ձեռնար-  
կություններում և սայոններում։

Այնուհետև գալիս են. ուղմասա-  
Ս.Յ. ՅԵՎ. Ս.Յ. Նիտարական խմբերը գլխավորապես  
կանանց համար։ ուղմասանուեսական  
խմբեր, վորոնք պատրաստում են կանանցից աշխա-  
տավորներ՝ զորքերում պաշտոնավելու համար (հան-  
գերձապահ և այլն)։

Բացի վերոհիշյալ խմբերից, վորոնք ուղմական  
ակնհայտնի թեքումն ունեն, կան նաև ավելի խաղաղ  
թեքումն ունեցող խմբեր։ Դրանց թվին են պատկա-  
նում, պլաներիզմի, մոդելիզմի, այերոսահ-  
նակային սպորտի, գյուղատնտեսական  
խմբեր, գեղաբույսեր հավաքելու, ուղիստ-  
ների խմբեր և այլն։

Այլ կերպ են կազմվում պահեստի  
ՀՐԱՄԿԱԶԻՐԻ կրտսեր, միջին, ավագ և բարձրագույն  
ԺԱՄԱՆԱԿԱՆ հրամկագմի վերապարաստելու ինչպես  
ՎՈՐ ԳԱՍՏՆ- Ժամանակավոր, նույնպես և յերկարատե-  
ԹԱՅՆԵՐ խմբեր և դասընթացները, ըստ վորում

Դրանց ցանցը մեծ մասամբ կազմակերպվում է Ոսո-  
ավիաքիմի ուսունական, քաղաքային, նահանգական  
շրջանային և յերկրային խորհուրդների անմիջական ղե-  
կավարությամբ և համապատասխան ուսումական հրա-  
մանատարության կատարյալ համաձայնությամբ:

## ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կջ

I.	Նոր պատերազմների վտանգը և ԽՍՀ Միություն պատպանության խնդիրները . . . . .	3
II.	Ռազմականացման բովանդակության մասին . . . . .	6
III.	Ռազմականացման ձեերն ու մեթոդները . . . . .	14
IV.	Ռազմական մասայական աշխատանքը ակումբում	35
V.	Ոսուավիաքիմի անկյունը . . . . .	54
VI.	Պատի լրտգիր . . . . .	62
VII.	Մասայական ռազմական աշխատանքի խորա- ցրած ձեերը . . . . .	65



41.285

30 чпт.

цена 50 коп.

О. П. 4.



---

П. ПОЖАРСКИЙ  
Военизация населения  
и  
политпросветработка  
(перев. с русск.)

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10